

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
<<ՆԱՆԱՏ>>
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք.Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շրջանային փող., տուն 76 (0068), Հեռ. 095281199,
094104999 sargsyanhayk842@gmail.com, haqochinyan@gmail.com

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆՈՒՏԻ ԱՎԱԶԱԿՈՂՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
«ՆԱՆԱՏ» ՏԵՂԱՄԱՍԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
(լրամշակված)

«ՆԱՆԱՏ» ՍՊԸ Տնօրեն՝

Հ.Սարգսյան



Երևան-2025թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ.....	4
1 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	7
1.1 Նախաձեռնողի անվանումը և գտնվելու վայրը.....	7
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	7
2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	10
2.1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նկարագիրը	12
2.2. Նախագծման իրավական հիմքը	21
3.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	26
3.1. Շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատման նպատակով օգտագործված ելակետային տվյալների աղբյուրները, հավաքագրման և ուսումնասիրությունների իրականացման մեթոդները	26
3.2. Տեղադիրքը.....	26
3.3. Ռելիեֆը, երկրաձևաբանությունը	30
3.4. Սելամիկ պայմանների բնութագիրը	38
3.5. Կլիմա.....	39
3.6. Մթնոլորտային օդ	41
3.7. Ջրային ռեսուրսներ	43
3.8. Հողային ծածկույթ	49
3.9. Բուսական և կենդանական աշխարհ	52
3.10. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	55
3.11.Անտառային ռեսուրսներ	56
3.12. Բնության հուշարձաններ	56
4.ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	57
4.1. Ենթակառուցվածքներ	57
4.2.Հողերի տնտեսական յուրացման բնութագիրը	59
4.3.Պատմության և մշակութային հուշարձանները.....	61
4.4 Տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ	62
5.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	63

6.ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	73
6.1. Նախատեսվող հիմնական միջոցառումները.....	73
6.2. Սոցիալական ազդեցություն	76
6.3. Արտակարգ իրավիճակների, անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումների ծրագրեր	77
7.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ.....	81
8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	85
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	87
Հավելված 1. Հողամասերի վարձակալության վկայականները, հողամասերի հատակագծերը, նախատեսվող գործունեության վերաբերյալ համաձայնագիրը.....	88
Հավելված 2. Հնագիտական տեղագնության եզրակացությունը.....	95
Հավելված 3. Իրավիճակային հատակագիծ	96

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երևույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև:

շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները:

նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

նախաձեռնող՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն՝ հիմնադրությամբ փաստաթղթի նախագիծ ներկայացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ նախատեսվող գործունեություն իրականացնելու համար դիմող անձ:

ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք:

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին:

հայտ՝ նախաձեռնողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությամբ փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ:

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար օրենքով սահմանված ռեժիմը:

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի բերրի և հնարավոր բերրի շերտի հանման նորմը (Ն)՝ արտահայտված խոր. մետրով.

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

բնապահպանական կառավարման պլան՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները (շինարարության, շահագործման, փակման, հետփակման փուլերը, ռիսկային և արտակարգ իրավիճակները), դրանց ընտրության և արդյունավետության հիմնավորումը, իրականացման ժամանակացույցը, մշտադիտարկման ցուցիչները, ծախսերի գումարային գնահատումը նախատեսող փաստաթուղթ.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության և մշակույթի անշարժ հուշարձան՝ պետական հաշվառման վերցված և հուշարձանի կարգավիճակ ունեցող պատմական կամ հնագիտական կամ ճարտարապետական կամ մոնումենտալ արվեստի կամ գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող հնագիտական շերտերը, քարեդարյան կայանները, քարայր-կացարանները, կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց զբաղեցրած և պատմականորեն դրանց հետ կապված տարածքով, դրանց մաս կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, որմնակարները, պատմամշակութային արգելոցները, պատմական լանդշաֆտները և հիշարժան վայրերը, պատմական բնակավայրերի քաղաքաշինական և պատմական կենտրոնները՝ անկախ պահպանվածության աստիճանից.

արտադրական լցակույտեր՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում՝ պոչանքներ)՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում:

ջրապահպան անօտարելի գոտիների տարածքներ՝ տարածքներ, որտեղ ապահովվում են ջրամատակարարման, ջրահեռացման, ինչպես նաև հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործումը, վերականգնումը և պահպանումը: Տարածքներն ընդգրկում են ջրամատակարարման, ջրահեռացման և հիդրոտեխնիկական կառուցվածքներին անմիջապես հարող տարածքները:

1.ՇՐՋԱՄԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1.1 Նախաձեռնողի անվանումը և գտնվելու վայրը

Նախաձեռնող՝ «ՆԱՆԱՏ» ՍՊԸ

Գրանցման համար՝ 290.110.1211921

Գրանցման օրը՝ 12.02.2025թ.

Գրանցման օրը՝ 10.01.2022թ.

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա, Շրջանային փ., տ. 76 (0068)

Տնօրեն՝ Հ. Սարգսյան

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի (ԱԿԽ) հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի սահմաններում 2025-2026թթ. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն հաշվետվությունը կազմվել է «ՆԱՆԱՏ» ՍՊԸ-ի կողմից:

Նախատեսվող գործունեությունն անվանվում է՝ «ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի (ԱԿԽ) հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի սահմաններում 2025-2026թթ.օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման ծրագիր»:

Նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակն է Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի երկրաբանական հետախուզումը, հումքի և պարփակող ապարների ուսումնասիրումը: Աշխատանքների ամբողջական կատարման արդյունքում ակնկալվում է ավազակոպճային խառնուրդի արդյունաբերական նշանակության պաշարների հաշվարկում, տեղամասի երկրաբանատնտեսագիտական գնահատում: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքները նախատեսվում է ներկայացնել պետական ընդերքաբանական փորձաքննության:

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող ծրագրի կամ գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացվում է իրականացվելիք գործունեության շրջակա միջավայրի վրա ունենալիք ազդեցությունների գնահատականը, ինչպես նաև մշակվում են բոլոր այն միջոցառումները, որոնք հնարավորություն կտան մեղմելու ազդեցության չափը:

Հաշվետվությունը կազմելիս ուսումնասիրվել է միջազգային լավագույնը փորձը, օգտագործվել են բնապահպանական ուղեցույցների, ձեռնարկների ինչպես նաև մեթոդական ցուցումների դրույթներն ու կարգավորումները:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքին օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է Բ կատեգորիայի, որի կազմի և բովանդակության պահանջները սահմանվում են նույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով: Ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության կազմը և բովանդակությունը համապատասխանում է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքին, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ. թիվ 369-Ն հրամանի հավելված 2-ի դրույթներին:

«ՆԱՆԱՏ» ՍՊԸ կողմից հայցվող տարածքը կազմում է մոտ 21.63հա: Հայցվող տարածքը գտնվում է մոտ 22հա ընդհանուր մակերեսով համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության 2 հողամասերի սահմաններում (ծածկագիր՝ 04-039-0063-0051 և 04-039-0063-0052, հողատեսքը՝ այլ): Հողամասերը վարձակալության իրավունքով պատկանում են ՀՀ քաղաքացի Հայկ Սարգսյանին (Վարձակալության վկայականներն ու հողամասերի հատակագծերը, նախատեսվող գործունեության վերաբերյալ համաձայնագիրը կցվում են՝ Հավելված 1):

Ներկայացվող գնահատման հաշվետվությունում բերված են տեղամասի երկրաբանական ուսումնասիրության տեխնիկա-տեխնոլոգիական գործընթացների

նկարագրությունը, դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև ազդեցության նվազեցման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական նպատակն է՝ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք է հանդիսանում դրանց կանխարգելման կամ հնարավորին չափի նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

ՇՄԱԳ հաշվետվության մեջ բովանդակային կարևոր պահանջ է հանդիսանում հիմնադրույթային փաստաթղթերին (շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթուղթ (ռազմավարություն, հայեցակարգ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, պլան, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) կամ փաստաթղթի փոփոխություն՝ հաստատված Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների այլ իրավական ակտերով) նախագծային փաստաթղթով (նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ և դրանց փոփոխություն...) նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումը:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի հիմնադրույթային փաստաթուղթը՝ «ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ (ՄԻՆՉԵՎ 2035 ԹՎԱԿԱՆԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ընդունվել է 2023թ. մայիսի 11-ին ՀՀ Կառավարության կողմից թիվ 730-Լ Որոշմամբ:

Նախատեսվող սույն գործունեության համապատասխանությունը հիմնավորվում է նշված Որոշման Հավելված 1-ի 3-րդ գլխում ամփոփված՝ ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի ուժեղ և թույլ կողմերի վերլուծության մեջ: Նշվում է, որ օգտակար հանածոների նոր պաշարների հայտնաբերման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրերը ներկայումս իրականացվում են ոչ բավարար քանակով և, որ անհրաժեշտ է իրականացնել երկրաբանական նոր տվյալների հավաքագրման և դրանց հետագա կառավարման, օգտակար հանածոների նոր պաշարների հայտնաբերման աշխատանքներ...: Նախատեսվող սույն գործունեությունը միտված է իր մասով լրացնելու ոլորտի զարգացման վերոնշյալ

բաղադրիչը և լիովին համապատասխանում է ռազմավարության տրամաբանությանը:

Նախատեսված գործունեության թույլտվության ստացման պարագայում Ընկերության կողմից գործունեության իրականացման վերջնարդյունքն ամենայն հավանականությամբ լինելու է օգտակար հանածոի նոր պաշարների հաշվարկումն ու հաստատման ներկայացումը: Այս համատեքստում նշենք հիմնադրությային նշված փաստաթղթի կարևոր և առանցքային դրույթներից.

-հանքարդյունաբերությունն ունի բարձր տնտեսական բազմապատկիչ (մուլտիպլիկատոր): Վերը նշված ՀՆԱ բազմապատկիչի հիման վրա հաշվարկների իրականացման արդյունքում ստացվում է, որ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի ընդհանուր ներդրումը ՀՀ ՀՆԱ-ի մեջ 2021 թ.-ի համար կազմում է 11%, որից մոտ 6%-ը բուն ոլորտի ուղղակի ներդրումն է, իսկ մոտ 5%-ը՝ անուղղակին: Տնտեսության այլ ճյուղերի համեմատ հանքարդյունաբերության բազմապատկիչը ամենաբարձրն է ողջ աշխարհում..

- Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման ոլորտի հիմնական ուղենիշն օգտակար հանածոների՝ տնտեսապես արդյունավետ, ողջամիտ և համալիր շահագործման, ինչպես նաև սերունդների հանդեպ պատասխանատվության (այդ թվում՝ բնապահպանական ռիսկերի կառավարման) նպատակների համակցմամբ գործուն համակարգի ապահովումն է: Այն թույլ կտա իրացնել երկրի բնական պաշարների ներուժը՝ առավելագույն սոցիալ-տնտեսական օգուտների ստացման, դրանց արդյունավետ բաշխման և երկարաժամկետ կայուն զարգացման ակնկալիքով:

Նախագծային փաստաթղթով նախատեսվող սույն գործունեությունը նախագծվել, մշակվել է հիմնադրությային փաստաթղթում ամրագրված հայեցակարգային դրույթներին համապատասխան, ըստ որոնց՝ ժամանակակից հանքարդյունաբերության ամենաբարձր ստանդարտները պահանջում են ընդհանուր հաշվեկշռում բացասական ազդեցության մեղմման ու դրական ազդեցություն թողնելու միջոցառումների ապահովում, ինչը հնարավոր է իրականացնել գործնականում: Ե՛վ բնապահպանական, և՛ սոցիալական ժամանակակից լավագույն չափանիշներին հետևող հանքարդյունաբերական նախագծերը հիմնված են այն

սկզբունքի վրա, որ մեղմեն ցանկացած հասցված վնաս և ավելացնեն այլ վայրում կամ այլ միջոցով դրական ազդեցություն:

2.1.Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նկարագիրը

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի կամ տեղամասի ուսումնասիրման աշխատանքների ծրագիրը կազմված է «Օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները սահմանելու մասին» ՀՀ ՏԿԵ նախարարի 11.08.2021թ. N06-Ն հրամանի հավելված N 3-ի համաձայն՝ «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» պահանջներին համապատասխան:

Հետախուզման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնված օգտակար հանածոյի ձևաբանությունը, տեղադրումը, դիրքը, տեղամասի երկրաբանական կառուցվածքը, երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական, ջրաերկրաբանական պայմանները, տեղամասի չափերը, ռելիեֆի ձևն ու մերկացվածության աստիճանը և այլն: Ըստ նախնական դիտարկումների՝ ԱԿԽ-ի և օգտակար հանածոն ծածկող շերտի ընդհանուր հզորությունը սպասվում է մինչև 10մ սահմաններում, որի հատակում աստիճանաբար ի հայտ են գալու կավային և կավավազային առաջացումներ: Տեղամասը կարող է վերագրվել 1-ին խմբին, այն է՝ ավազի և ավազակոպճա-գլաքարային ապարների այլուվիալ հանքավայրեր՝ օգտակար ստվարաշերտի կայուն կառուցվածքով, հզորությամբ և որակով:

Համաձայն վերը նշված հրահանգի աղյուսակ 1-ով ավազի և ավազակոպճային հանքավայրերի հետախուզման ժամանակ կիրառվող հետախուզական փորվածքների ցանցի խտությանը ներկայացվող պահանջների՝ փորվածքների միջև հեռավորությունն ըստ պաշարների կարգերի առաջարկվում է A կարգի համար՝ 100-200մ:

Նախատեսվում է ԱԿԽ տեղամասի մանրակրկիտ հետախուզում, հումքի որակական հատկությունների պարզաբանման և արդյունաբերական A կարգով

պաշարների գնահատման և հաշվարկման նպատակով՝ ելնելով տարածքի ձևից և չափերից:

Նախատեսվում է ավագակոպճային խառնուրդն ուսումնասիրել որպես շինարարական հումք՝ ըստ «Ավագ շինարարական աշխատանքների համար» ԳՈՍՏ 8736-2014-ի տեխնիկական պայմանների և «Խիճ կոպիճից շինարարական աշխատանքների համար» ԳՈՍՏ 10260-82 տեխնիկական պայմանների:

ԱԿԽ տեղամասի երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքները նախատեսվում է իրականացնել հետախուզահորերի անցման և նմուշարկման միջոցով:

Հետախուզահորերի անցում

Տեղանքի հարթ ռելիեֆի և տարածքի անբավարար մերկացվածության պայմաններում տեղամասի հետախուզումը նախատեսվում է իրականացնել հետախուզահորերի միջոցով: Հետախուզահորերով նախատեսվում է որոշել ԱԿԽ զանգվածը ծածկող հողաբուսական և կավային բերվածքային շերտի և ԱԿԽ-ի հզորությունը: Ծածկող ապարների միջին հզորությունը սպասվում է 2մ սահմաններում տեղամասի եզրային մասերում և 0-0.5մ՝ տեղամասի ոչ եզրային մասերում:

Հետախուզահորերի կտրվածքը նախատեսվում է $1.6\text{մ}^2(0.8 \times 2\text{մ})$, քանակը՝ 31 հոր: Նախատեսվող խորությունը՝ 6-10մ, միջինը՝ 8մ, ընդամենը՝ մոտ 248գծ.մ.:

Հետախուզահորերը կանցվեն CAT 326-07 մակնիշի էքսկավատորի միջոցով, որը համալրված է ընդհանուր 18մ երկարությամբ թևերով և շերեփով: Հորերի անցման ժամանակ նախապես կառանձնացվեն առկա հողաբուսական շերտը (եթե այդպիսիք լինեն), և դրա ներքևում տեղադրված կավավազային շերտը, որոնք կօգտագործվեն փորվածքի նմուշարկումից և հանված լեռնային զանգվածի հետլցնումից հետո հորերի մակերեսների վերականգնման համար: Հորերը ծրագրին կից քարտեզում տեղակայվում են մոտավոր:

Թվով 31 հետախուզահորերի ընդհանուր մակերեսը կկազմի՝ $31 \times 1.6\text{մ}^2 = 49.6\text{մ}^2$:

Փորվածքներից ընդհանուր հեռացման ենթակա ապարների ծավալը կկազմի.

$248\text{գծ.մ.} \times 1.6\text{մ}^2 = 393.6\text{մ}^3$ դելյուվիալ կավավազային զանգված և ԱԿԽ:

Լեռնային փորվածքների փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր լեռնային փորվածքները:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:50 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները կկազմեն՝ 248գծ.մ հորերի փաստագրում:

Երկրաբանահանույթային աշխատանքներ

Տեղամասում նախատեսվում է կատարել տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական հանույթ՝ ընդգրկելով մոտ 22 հա հայցվող տարածքը և հարակից գոտիները, ընդհանուր մոտ 30հա տարածք:

Նմուշարկում

Նմուշարկումն իրականացվելու է բոլոր 31 հետախուզահորերի օգտակար հանածոյից և երկուական նմուշ՝ ծածկող ապարներից և հիմնատակող կավերից:

Օգտակար հանածոյի նյութական, հատիկային կազմը և տեխնոլոգիական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է ԱԿԽ զանգվածից ակոսային և համախառը նմուշների վերցնում: Օգտակար հաստվածքի նմուշարկումը հետախուզահորերից նախատեսվում է ակոսային նմուշների միջոցով՝ 40սմx40սմ կտրվածքով՝ եթե փորվածքը ջրհեղված վիճակում չէ, հակառակ դեպքում՝ յուրաքանչյուր մետրից հանված զանգվածից համախառը ձևով՝ վերջում միավորելով 1 նմուշի մեջ:

Նախատեսվում է վերցնել յուրաքանչյուր հորից 1 նմուշ, ընդամենը 31 նմուշ՝ ԱԿԽ-ի բացված ամբողջ հզորությամբ: Տեղում կրճատելու միջոցով մեկ նմուշի քաշը կհասցվի մոտ 20 կգ-ի, որից 10կգ-ը կուղարկվի հիմնական (շարքային) լաբորատորիա:

Թվով 2 նմուշ էլ պետք է վերցվի օգտակար հանածոն ծածկող ապարներից և ևս 2 նմուշ՝ հիմնատակող կավերից, որոնք նույնպես կուղարկվեն հիմնական լաբորատորիա:

Ընդհանուր վերցվող նմուշների քանակը կկազմի՝ $31+2+2=35$ նմուշ:

Նմուշների մշակում

Հումքի ուսումնասիրման համար վերցված նմուշների մշակումը և կրճատումը նախատեսվում է $K=0.04$ մեծության օգտագործմամբ:

Վերցված նմուշների կրճատումը նախատեսվում է քառաբաժանմամբ՝ համաձայն վերոնշյալ հրահանգի դրույթների:

Լաբորատոր ուսումնասիրություններ

Վերցված բոլոր 35 (31+2+2) շարքային նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների:

Թվով 31 շարքային նմուշներից 15-ը կուսումնասիրվեն միայն կրճատ ծրագրով, իսկ որոշակի հեռավորության ցանց ապահովող փորվածքներից վերցվող 16 նմուշները՝ լրիվ ծրագրով՝ ըստ համապատասխան ԳՕՍ-երի պահանջների, մասնավորապես՝ ֆիզիկամեխանիկական հատկությունների, հատիկաչափական կազմի հետազոտման և այլն:

Թվով 4 միավորված (խմբային) նմուշների միջոցով կկատարվեն քիմիական անալիզներ՝ դրանցում առկա հիմնական բաղադրիչների քանակը որոշելու նպատակով:

Ստուգիչ անալիզների իրականացման նպատակով 8 նմուշներ կվերցվեն շարքային լաբորատորիայի նմուշների կրկնօրինակներից և կտրվեն արտաքին վերստուգիչ հանդիսացող «Անալիտիկ» ՓԲԸ լաբորատորիա:

Լաբորատոր ուսումնասիրությունների ենթակա բոլոր նմուշների քանակությունը կկազմի. $31 \text{ նմուշ} + 8 \text{ նմուշ} = 39 \text{ նմուշ}$ օգտակար հանածոից և 4 նմուշ պարփակող ապարներից (օգտակար հանածոն ծածկող և հիմնատակող):

Օգտակար հանածոն ծածկող ապարների շերտից վերցված նմուշները կօգտագործվեն նաև դրանց ծավալային զանգվածի որոշման նպատակով, ապագա բացահանքի կողերի թեքության պարամետրերի որոշման համար:

Օգտակար հանածոն նախատեսվում է ուսումնասիրել համալիր՝ հումքի օգտագործման հնարավոր բոլոր ուղղություններով, կիրականացվի նաև 5 նմուշներով միներալային կազմի ուսումնասիրում:

Դաշտային պայմաններում հումքի ծավալային և ծավալարիքային զանգվածի և մաղման միջոցով հումքի հատիկաչափական կազմի որոշում

ԱԿԽ ծավալային զանգվածը 6 նմուշներով անհրաժեշտ է որոշել բնական վիճակում և ըստ տարատեսակների՝ գլաքար, կոպիճ և ավազ, եթե այդպիսիք կան: Նույն նմուշներով կորոշվեն հումքի խոնավության չափը, փխրեցման գործակիցը:

Բնամասում ԱԿԽ զանգվածի հատիկաչափական կազմի որոշման նպատակով, 6 հետախուզահորերի անցման ժամանակ, 1.6մ²×0.5մ չափերով կտրվածքից հանված զանգվածը կշռվելու է, սկզբնական մաղվելու է 50×50մմ կտրվածքով երկաթե մաղի միջոցով՝ գլաքարերը ավազակոպճային զանգվածից առանձնացնելու նպատակով, այնուհետև՝ 5×5մմ կտրվածքի մաղով՝ կոպիճը ավազից առանձնացնելու նպատակով: Ստացված 3 հատիկաչափական չափամասերը կշռվելու են առանձին-առանձին, որով կորոշվի հումքի հատիկաչափական կազմը:

ԱԿԽ տեղամասի հումքում առկա կոպիճի (կամ գլաքարերի) ֆիզիկամեխանիկական փորձարկումների նպատակով (որպես խիճ) այս նմուշներից կկազմվեն 4 խմբային նմուշներ, որոնք կուսումնասիրվեն որևէ լաբորատորիայում:

Օգտակար հանածոն ծածկող մակաբացման շերտից վերցված 2 նմուշներով էլ կորոշվի մակաբացման շերտի ծավալային զանգվածը:

Ծավալարիքային զանգվածի որոշման համար նախատեսվում է 6 նմուշներով փորձարկում:

Տոպո-գեոդեզիական աշխատանքներ

Ընկերության պատվերով ավելի քան 30հա տարածքում կատարվել է 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ՝ հանույթում ընդգրկելով նաև հայցվող տարածքին հարակից որոշակի գոտիներ ևս՝ ճշգրիտ տեղակապման նպատակով: Կազմվել է 1:2000 մասշտաբի իրավիճակային հատակագիծ:

Նախատեսվում է երկրաբանական ուսումնասիրության ժամանակ ևս կատարել տոպոհանույթ՝ բոլոր հետախուզական փորվածքների երկրակապակցմամբ: Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով:

Ինժեներաերկրաբանական, լեռնատեխնիկական և ջրաերկրաբանական պայմանների ուսումնասիրություններ

Տեղամասի ինժեներաերկրաբանական, լեռնատեխնիկական և ջրաերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հետախուզական փորվածքների անցման ընթացքում, ինչպես նաև տեղամասի հարևան տարածքների տեղագնում գեոդինամիկ երևույթների առկայության պարզաբանման նպատակով: Ըստ նախնական դիտարկումների՝ ԱԿԽ զանգվածը զգալիորեն գտնվում է ջրային միջավայրում, գրունտային ջրերի մակարդակը կախված սեզոնից գտնվում է մակերեսից մինչև 2-4մ խորության վրա:

Ռադիոմետրական չափումներ

Նախագծով նախատեսված հիմնական աշխատանքներին զուգընթաց իրականացվելու է ապարների ռադիոակտիվության ուսումնասիրություններ:

Բոլոր լեռնային փորվածքները ենթարկվելու են γ -պրոֆիլացման: Դիտարկման կետերի ֆիքսումն իրականացվելու է համաձայն գործող նորմերի՝ հետախուզահորերում 2 կետ 1մ^2 վրա ջրի բացակայության դեպքում, իսկ ջրհեղված մասում՝ յուրաքանչյուր մետրից հանված հումքի վրա կատարվող չափումներով, քանի որ ջրհեղված մասում հնարավոր չէ իրականացնել նմանատիպ չափումներ:

Աշխատանքները կատարվելու են սեփական ուժերով՝ СРП-68-01 ռադիոմետրով:

Փորվածքների լցում

Հետախուզահորերից հեռացված զանգվածը նմուշարկումից հետո հետ կվերադարձվի փորվածքների տարածք, կհարթեցվի և կամրացվի: Ընդհանուր ծավալը կկազմի մոտ 393մ^3 , իսկ ընդհանուր մակերեսը՝ մոտ 49.6մ^2 ($31 \times 1.6\text{մ}^2$):

Ընդհանուր 49.6մ^2 մակերեսով հորերի անցման ժամանակ այդ տարածքներից տեղահանվելու է դելյուվիալ կավավազային և ԱԿԽ շերտեր: Աշխատանքների ավարտին այդ ապարները կօգտագործվեն փորվածքները լցնել-ծածկելու համար: Երկրաբանական աշխատանքների ընթացքում հողերի աղտոտում չի լինելու:

Մակերեսային շերտի վերականգնման ենթակա ընդհանուր մակերեսը կկազմի մոտ 49.6մ²:

Ծրագրով նախատեսվում է խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնման միջոցառումներ՝ փորվածքների լցում, հողագուրկ մակերեսների հարթեցում, ամրացում և ռեկուլտիվացիա:

Հնէաբանական ուսումնասիրություններ

«ՆԱՆԱՏ» ՍՊԸ Ընկերության պատվերով 2025թ. ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և Ազգագրության Ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է հնագիտական տեղագնություն, որի արդյունքում վերգետնյա պատմամշակութային շերտեր չեն փաստագրվել (Հավելված 2):

Աշխատանքների կատարման որևէ փուլում հնագիտական արժեքների հայտնաբերման դեպքում պետք է անհապաղ տեղեկացնել համապատասխան պատկան մարմիններին:

Աշխատանոցային աշխատանքներ

Աշխատանոցային աշխատանքների ժամանակ կկատարվի ամբողջ փաստացի նյութի ընդհանրացում և համակարգում, երկրաբանական հաշվետվության կազմում իր համապատասխան քարտեզներով, հատակագծերով և կտրվածքներով: Հաշվետվությունը կներկայացվի պետական ընդերքաբանական փորձաքննության:

Տեղամասի տարածքի վրա բացակայում է անտառային գոտին և չկան շինություններ: Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը նվազեցնելու համար սովորաբար նախատեսվում է չոր եղանակին ճանապարհների պարբերական ջրման աշխատանքներ: Տեղամասը Եղեգնուտ գյուղի կենտրոնական ասֆալտապատ ավտոճանապարհին միացնող գրունտային խճապատ ճանապարհի երկարությունը կազմում է մոտ 0.4 կմ: Ընդամենը 4-5 օրվա տևողությամբ դաշտային աշխատանքները կարելի է կազմակերպել խոնավ եղանակին և ավտոտրանսպորտի շարժով փոշի չառաջացնել: Բուն տեղամասում հումքը գտնվում է ջրհեղված վիճակում և կապիլյար ներծծման շնորհիվ հողամասի մակերեսը ևս գտնվում է

խոնավ վիճակում, ուստի աշխատանքների կատարման և տեխնիկա-տրանսպորտային միջոցների տեղաշարժման ժամանակ փոշեառաջացում չի լինի և ջրման կարիք չի զգացվի: Հետախուզահորերից հեռացված զանգվածը նմուշարկումից հետո հետ կվերադարձվի փորվածքների տարածք, կհարթեցվի և կամրացվի: Հորերի անցման ընդհանուր ծավալը կկազմի 393.6մ^3 , իսկ ընդհանուր մակերեսը՝ 49.6մ^2 ($31 \times 1.6\text{մ}^2$):

Անվտանգության տեխնիկան

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում կիրականացվեն աշխատանքի անվտանգության միջոցառումներ համաձայն գործող «Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգության կանոններ» ցուցումների:

Աշխատանքները նախատեսվում է կատարել անվտանգության միասնական կանոնների (ԱՄԿ) պահանջներին, ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը:

Այդ պահանջներից անհրաժեշտ է նշել.

- Բոլոր աշխատողները, որոնք ընդունվում են աշխատանքի, պետք է անցնեն անվտանգության տեխնիկայի նախնական ուսուցում:

- Յուրաքանչյուր բանվոր, մինչև աշխատանքները սկսելը, պետք է համոզվի, որ իր աշխատատեղի անվտանգությունը ապահովված է:

Բոլոր աշխատակիցները կապահովվեն համազգեստով և անհատական պաշտպանության միջոցներով:

Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը կնախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Ֆիզիկական ազդեցությունները /օրինակ՝ աղմուկը/ կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները կունենան համապատասխան խլացուցիչներ:

Լեռնատրանսպորտային սարքավորումները պետք է թույլ տան աշխատել միայն այն դեպքում, եթե նրանք սարքին են:

Աշխատակազմը կունենա խմելու որակյալ ջրի, զուգարանի հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ:

Աշխատատեղերում՝ հասանելի վայրում, կլինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ (կրակմարիչներ, ավազ, բահ և այլն):

Ընկերությունը աշխատակիցների նկատմամբ խտրական գործելակերպ և իրավունքների սահմանափակում չի կիրառելու:

ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի ՆԱՆԱՏ տեղամասի ուսումնասիրության աշխատանքների ծրագիրը ներկայացվել է ազդակիր համայնքի բնակիչներին, ներկայացվել են օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրի նպատակը:

Ընկերության ներկայացուցիչների կողմից հնարավորինս մանրամասնորեն տրվել է նախատեսվող գործունեության բնութագիրը՝ օգտագործվող բնական ռեսուրսները ու նյութերը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, քննարկվել է նախատեսվող աշխատանքներում բնակիչների ներգրավման հարցը:

Ազդակիր համայնքի բնակիչները ընդհանուր առմամբ դրական են վերաբերվել նախատեսվող գործունեությանը և համայնքը տվել է իր նախնական համաձայնությունը:

Ինժեներատեխնիկական միջոցառումները

- Քաղաքացիական պաշտպանության գծով ինժեներատեխնիկական միջոցառումներն ուղղված են աշխատողներին պաշտպանելու զամմա ճառագայթների ազդեցությունից, պատերազմի ժամանակ տեղանքի ռադիոակտիվ վարակման ժամանակ:

- Մարդկանց փոքր քանակի պատճառով նախատեսվում է օգտվել մոտակա բնակավայրի բնակիչների համար նախատեսված հակառադիացիոն թաքստոցներից:

2.2. Նախագծման իրավական հիմքը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակվել է ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, նախարարների հրամանների, գործող մեթոդականությունների, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի հիման վրա:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախագծելիս և իրականացնելիս ընկերությունն առաջնորդվելու է մասնավորապես ՀՀ հետևյալ օրենսդրական իրավական ակտերով.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական

աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ., խմբագրվել է 03.05.2023թ. ՀՕ-150-Ն), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

- Թափոնների մասին ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N1059-Ա որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները:

- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

- «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը,

- «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման եվ վճարման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 10 հունվարի 2013 թվականի N 22-Ն որոշումը,

- «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N 676-Ն որոշում,

- «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության 21.10.2021թ. N 1733-Ն որոշում

- Հրաման N6-Ն 07.01.2022թ. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N365-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին

- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն Որոշում, որով հաստատվել են ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները,

- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N675-Ն Որոշում, որով սահմանվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները:

- ՀՀ կառավարության 17.08.2017թ.-ի N990-Ն Որոշում, որով սահմանվել են ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը:

- ՀՀ կառավարության 27.05.2015թ. N 764-Ն Որոշում, որով կարգավորվում են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր տնտեսական վնասների գնահատման և հատուցման հետ կապված հարաբերությունները:

- Շրջակա միջավայրի նախարարի «25» հոկտեմբերի 2022թ. N 369-Ն հրաման, ըստ որի Հավելված 2-ի՝ Էկոլոգիական անվտանգության պահանջների և բնապահպանական սահմանափակումների ապահովման նպատակով ընդերքօգտագործողի կողմից նախատեսվող գործունեության իրականացմանն ընդառաջ մշակվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, որում ներառվում են շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության շրջանակները և շրջակա միջավայրի օբյեկտները:

- ՀՀ կառավարության 03.10.2002թ. N 1589-Ն Որոշում, որով հաստատվել է Արմավիրի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը:

- ՀՀ Կառավարության 11.11.2021թ. N 1848-Ն Որոշում, որով հաստատվել է ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախագծելիս և իրականացնելիս ընկերությունն առաջնորդվելու է նաև մասնավորապես հետևյալ միջազգային համաձայնագրերով.

1. «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)

2. «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
3. «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
4. «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
5. Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
6. «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
7. ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
8. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
9. «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ)
(վավերացվել է ՀՀ կառավարության կողմից 2003թ.-ին)
10. «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել.)

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1. Շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատման նպատակով օգտագործված ելակետային տվյալների աղբյուրները, հավաքագրման և ուսումնասիրությունների իրականացման մեթոդները

Շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատումը ներառում է նախատեսվող գործունեության կողմից զբաղեցվող հողատարածքը, ինչպես նաև դրա անմիջական հարևանությամբ գտնվող տարածքները և ցանկացած այլ տարածքներ, որոնց վրա կարող են ազդել նախատեսվող գործունեությամբ պայմանավորված աշխատանքները: Շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատման համար օգտագործվել է հիմնականում պաշտոնական էլեկտրոնային բաց աղբյուրներում առկա տեղեկատվությունները, ընդերքի տեղամասում և նրա շրջանում նախկինում կատարված ուսումնասիրությունների արդյունքները:

3.2. Տեղադիրքը

Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր խոշորացված համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական տարածքում, Եղեգնուտ գյուղի բնակելի տներից նվազագույնը 250մ դեպի հարավ, Մեծամոր քաղաքից մոտ 8կմ դեպի հարավ-արևելք (տեղադիրքը ներկայացվում է իրավիճակային հատակագծի վրա), մոտ 840-845մ բացարձակ բարձրության վրա:

Տեղամասը կապված է բնակավայրերի հետ գրունտային և ասֆալտապատ ավտոճանապարհով: Տեղամասը S-3-50 Երասխահուն-Եղեգնուտ-Արևիկ միջհամայնքային նշանակության ճանապարհից գտնվում է մոտ 400-500մ հեռավորության վրա: Աշխարհագրորեն տեղամասը տեղադրված է Արարատյան դաշտավայրի արևմտյան մասում:

Հայցվող տարածքի մակերեսը կազմում է մոտ 21.63հա, որն ընդգրկվում է ընդհանուր մոտ 22հա մակերեսով համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության երկու հողամասերի սահմաններում (ծածկագիր՝ 04-039-0063-0051 և 04-039-0063-0052, հողատեսքը՝ այլ):

Հայցվող տարածք

27

Տեղամասը Եղեգնուտ գյուղի հետ կապված է մոտ 0.4կմ երկարությամբ ավտոճանապարհով, էլեկտրահաղորդման գծերն անցնում են մոտ 50մ հեռավորության վրա:

Տեղամասում առկա են գրունտային ջրեր, որոնց որակական և այլ ցուցանիշները պետք է ուսումնասիրվեն երկրաբանական ուսումնասիրության շրջանակներում: Հետագա հնարավոր հանքարդյունահանման ժամանակ հնարավոր է, որ այդ ջուրն օգտագործվի տեխնիկական նպատակներով՝ ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան ՋԹ ստացման պարագայում: Նախատեսվող գործունեության՝ երկրաբանական ուսումնասիրության շրջանակներում ընկերությունը տեխնիկական ջրօգտագործում չի նախատեսում:

Տեղամասի տարածքի վրա բացակայում է անտառային գոտին և չկան շինություններ:

Շրջանի կլիման չոր ցամաքային է՝ շոգ ամառով: Տեղումների միջին քանակը կազմում է մինչև 350մմ, օդի միջին ջերմաստիճանը ամռանը կազմում է 32°C, ձմռանը՝ -6°C, ձյան ծածկույթը մնում է 1-2ամիս: Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է:

Ստորև ներկայացվում է հայցվող տեղամասի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով և իրավիճակային հատակագիծը.


Հայցվող տարածքի ծայրակետերի կոորդինատները					
Հ/Հ	Կոորդինատները		Հ/Հ	Կոորդինատները	
	X	Y		X	Y
1	4439117,2363	8428280,9696	10	4439118,2854	8429061,5985
2	4439097,7025	8428508,2256	11	4439108,1438	8428970,2959
3	4439274,1205	8428743,5406	12	4439071,6651	8428801,7475
4	4439293,4045	8428746,2256	13	4438906,7465	8428705,6242
5	4439348,0965	8428901,6016	14	4438748,6200	8428298,4400
6	4439426,0248	8428987,9480	15	4438861,0605	8428294,0648
7	4439420,1534	8429005,6447	16	4438946,5395	8428334,9825
8	4439273,1314	8428995,2577	17	4439027,2068	8428286,4368
9	4439278,0725	8429049,7766			

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ

(հատված K - 38 - 137 - B - 6 և B - r թերթերից)

Մասշտաբ 1 : 25 000

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)




Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր



Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածք

Նկար 2



— Երկրաբանական ուսումնասիրությունների
հայցվող տարածք

Նկար 3. Հայցվող տեղամասի տեղադիրքը

Տեղամասի հեռավորությունը. Եղեգնուտ գյուղի բնակելի տներից նվազագույնը 250մ, S-3-50 Երասխահուն-Եղեգնուտ-Արևիկ միջհամայնքային նշանակության ճանապարհից 400մ, ամենամոտ հանքավայրի արտադրական հրապարակից 1.1կմ, ամենամոտ մշակովի այգիներից՝ 30-50մ

3.3. Ռելիեֆը, երկրաձևաբանությունը

Ռելիեֆ

Երկրաձևաբանական տեսակետից «ՆԱՆԱՏ» տեղամասի տարածքն իրենից ներկայացնում է Արարատյան դաշտի արևմտյան մասը կազմող հարթավայր: Բարձրությունը տատանվում է 820-840-1000մ-ի սահմաններում, բուն տեղամասի տարածքը՝ մոտ 840-845մ: Արարատյան դաշտը Արարատյան գոգավորության հատակն է՝ լցված լճագետային, հեղեղաբերուկ նստվածքներով և լավաներով: Ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի դրոնք, որով բաժանվում է Շարուրի դաշտից: Դաշտի երկարությունը կազմում է ավելի քան 100 կմ, իսկ լայնությունը մինչև 25 կմ: Արարատյան գոգավորությունը ունի նեոգենի, չորրորդականի գոգածալքային-գրաբենային բարդ կառուցվածք՝ տրոհված


բազմաթիվ երիտասարդ խզումներով: Գոգավորության հիմքի բեկորային կառուցվածքները ուշ պլիոցենում ենթարկվել են գետերի էոզիոն մասնատման, որոնք վաղ չորրորդականում լցվել են 100-300մ հզորությամբ լավահոսքերով: Հզոր լավահոսքերը Արարատի և Նախիջևանի գոգավորություններն իրարից անջատող հորստաբեկորային միջնորմի հատվածում արգելափակել է Արաքսի հին հունը, առաջացրել է լիճ, որի հետևանքով գոյացել են Արարատյան դաշտի նստվածները:

Արարատյան գոգավորության ընդհանուր իջեցման հետևանքով գետահուններում կուտակվել են կոպճի, ավազի և կավի հզոր հաստվածքներ: Արարատյան դաշտավայրի մերձարաքսյան իջվածքի ակումուլյատիվ լճադարավանդային հարթավայրը ձևավորվել է վերին պլիոցեն-չորրորդականի ընթացքում Արաքս և Սևջուր գետերի մեանդրման արդյունքում և տեղամասի հարակից տարածքում ներկայացված է գետերի մշտական հոսքի մակարդակից 2.5-5.0մ բարձրությամբ Արաքսի ստորին լճային դարավանդի վերին չորրորդական հասակի ալյուվիալ, ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքներով և մեղմաթեք հարթավայրի հունամերձ հատվածի ժամանակակից ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքներով:


Արարատյան դաշտի եզրագոտին ներկայացված է սահմանակակից գետերի արտաբերման և ջրաբերուկային հովհարաձև կոներով, որոնք վերածվել են սեղանաձև դարավանդների: Տարածքում տեղ-տեղ բարձրանում են ծալքաբեկորավոր հիմքի ելուստներ (Խոր Վիրապ, Սարիպապ, Սալհովիտ) կամ խարամային կոներ (Դավթի բլուր, Մեծամոր):

Բուն տեղամասի տարածքը գտնվում է մինչև 3° թեքությամբ հարթավայրային հատվածում: Շրջանի մակերևույթի երկրաձևաբանական և լանջերի թեքությունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկարներ 4-5-ում:

Տեղամասի և հարակից տարածքներում սողանքային մարմիններ չեն արձանագրվել: Համաձայն ՃՄՀԳ «Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի»՝ տեղամասին ամենամոտ սողանքային մարմինները գտնվում են ավելի քան 25կմ հեռավորության վրա: Ըստ «2007-2010 թթ. ՀՀ տարածքի առավել վտանգավոր սողանքների ամփոփագրի կազմման աշխատանքների» հաշվետվության և ՀՀ Սողանքների քարտեզի (նկար 6), շրջանում սողանքներ և առավել վտանգավոր սողանքային մարմիններ չկան:



Նկար 4. Երկրաձևաբանական սխեմատիկ քարտեզ



Նկար 5. Լանջերի թեքության սխեմատիկ քարտեզ

չորրորդական հասակի այուվիալ, այուվիալ-պրոյուվիալ նստվածքներով և մեղմաթեք հարթավայրի հունամերձ հատվածի ժամանակակից այուվիալ-պրոյուվիալ նստվածքներով:

Տեղամասի շրջանում Արաքս գետի և դրա վտակների դիրքը հաճախ չի համընկնում ժամանակակից հունին և տեղաշարժված են դրանց նկատմամբ մինչև 10կմ չափով, որը վկայում է գետերի ինտենսիվ մեանդրագենեզի և փոխարառաջացումների լայն զարգացման մասին: Շրջանում հայտնի են նաև Սև ջուր և Հրազդան գետերի բազմաթիվ հին (չորացած) հուների ռելիեֆի բացասական ձևեր:

Շրջանի երկրաբանական կառուցվածքի հիմնական տարրերն արտացոլված են Վ.Մ. Ամարյանի կողմից կազմված պետական 1:50000 մասշտաբի երկրաբանական քարտեզում:

Շերտագրական սյունակի ստորին մասը ներկայացված է Ուշպրոտերոզոյ-վաղ պալեոզոյի հասակի երկփայլարային մետամորֆային թերթաքարերով, նոնաքարային և քվարց-նոնաքար-ստավրոլիտներով, որոնք ծածկված են Ստորին-վերին կավճի համակարգի (ապտ-ստորին կոնյակի հարկեր) հիմքային կազմի փոխակերպային հրաբխային և մերձհրաբխային ապարներով՝ մետաբազիտներ (գաբրոներ, դիաբազներ) և պորֆիրներ:

Դրանցից վեր տեղադրված են Պալեոգենի համակարգի ստորին էոցենի բաժնի (Կոտուցի շերտախումբ) ավազաքարեր, ալերոլիտներ, կրաքարեր, արգիլիտներ, մերգելներ և կոնգլոմերատներ:

Շերտագրական սյունակի հաջորդ ապարները ստորին միոցենի հասակի (Հացավանի շերտախումբ՝ ստորին խայտաբղետ հաստվածք) խայտաբղետ ավազաքարերը, կավերը և միկրոկոգլոմերատներն են, որոնք ծածկված են Միջին միոցենի բաժնի (կոնկինի հարկ՝ Ջրվեժի շերտախումբ) գիպսա-աղաբեր կավերով՝ քարաղի, գիպսի և անհիդրիդի դարսաշերտերով և ենթաշերտերով:

Վերին միոցենը ներկայացված է Հրազդանի շերտախմբի առաջացումներով, որոնք էլ իրենց հերթին ծածկված են Վերին պլիոցենի բաժնի (Արագածի շերտախմբի ստորին ենթաշերտախմբի վերին դարսաշերտ) անդեզիտաբազալտներով դրանց խարամներով և լավափշրաքարերով:

Շրջանում մերկացած են Միջին-վերին չորրորդականի նստվածքներ՝ երրորդ դարավանդի լճային (i) և լճային-ալյուվիալ (ia) կավեր, (ավազաքարային, դիատոմիտային) ավազակավեր, կավավազներ, ավազներ, խճաքարեր, ինչպես նաև Վերին չորրորդականի նստվածքներ՝ Արարատյան հարթավայրի երկրորդ դարավանդի լճային-ալյուվիալ ավազակավեր, կավավազներ, կավեր, ավազներ, խճաքարեր, Արարատյան հարթավայրի ստորին (առաջին) լճային դարավանդի ավազներ, խճաքարեր, ավազակավեր, կավավազներ և կավեր:

Լայն տարածում ունեն վերին չորրորդական-ժամանակակից Արաքս գետի հին հունի ալյուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ, ալյուվիալ-պրոլյուվիալ, էլյուվիալ-դելյուվիալ խճային ավազակավերը, ավազաքարա-կավային, ճահճային առաջացումները: Արաքս գետի ներկայիս հունի երկայնքով առկա են ալյուվիալ առաջացումների առաջին վերհունային դարավանդի ավազակոպճային առաջացումներ՝ ծածկված ժամանակակից կավավազային նստվածքներով:

Տարածքում հանդիպում են նաև ոչ մեծ չափսերի ճահճային նստվածքներ: Գետերի հուններում տարածված են ժամանակակից ալյուվիալ առաջացումներ՝ ճալաքարախառնուրդներ, ավազներ, ավազակավեր, կավավազներ, ավազակոպճային խառնուրդներ:

Տեկտոնական տեսակետից շրջանը մտնում է (ըստ Ա.Տ.Ասլանյանի) Արարատյան օրոտեկտոնական գոտու մեջ, որտեղ առանձնացվում են երկու տեկտոնական գոտիներ՝ Երևանյան և Մերձարաքսյան: Տեղամասի տարածքը մտնում է Մերձարաքսյան մեզասինկլինալային գոտու մեջ, որը 30-35կմ լայնությամբ (ՀՀ սահմաններում) ընդգրկում է Արարատյան հարթավայրը, Ուրցի լեռնաշղթան և երկու կողմերից սահմանափակվում է Երևանյան և Արարատյան խորքային խզվածքներով:

Արմավիրի մարզում գործում են շինաքարերի և երեսապատման քարերի մի շարք հանքավայրեր: Շրջանը հարուստ է նաև ավազի և ավազակոպճազլաքարային խառնուրդի հանքավայրերով՝ Հոկտեմբերյանի ԱԿԽ-ի խմբի հանքավայրեր՝ Ջանֆիդայի, Արմավիրի, Արզավանդի, Արևիկի, Ապագայի, ինչպես նաև Մարգարայի ավազի, Գոռի ավազի, Ջրառատի ԱԿԽ հանքավայրերը իրենց առանձին

տեղամասերով: Տեղամասի անմիջական հարևանությամբ հայտնի է Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրը:

Հեռավորությունը հայցվող տեղամասի և հաստատված պաշարներով Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի միջև կազմում է նվազագույնը 0.15կմ, իսկ հանքավայրի ամենամոտ արտադրական հրապարակից՝ 1.1կմ:

Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասը գետահունային առաջացումների մի մասն է: Տեղամասի օգտակար հաստվածքը ծագումնաբանորեն կապված է Արարատյան հարթավայրի Արաքս գետի առաջին (ստորին) վերհունային դարավանդի նստվածքային առաջացումների հետ: Տեղամասն ունի պարզ երկրաբանական կառուցվածք:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին չորրորդական-ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ-պրոլյուվիալ ավազակավային առաջացումները և Արաքս գետի հնահունի վերհունային դարավանդի վերին չորրորդականի ավազակոպճային և կավային նստվածքները:

Դելյուվիալ առաջացումներն ուսումնասիրությունների տարածքում ունեն սահմանափակ տարածում և փոքր հզորություններ, որոնք հիմնականում ներկայացված են ավազակավերով: Ավազակավային առաջացումները հիմնականում ծածկում են օգտակար հաստվածքին՝ ավազակոպճային խառնուրդների առաջացումներին:

Հայցվող տարածքի մակերեսի բուսահողային բերրի շերտը խորհրդային տարիներին հիմնականում հանվել, տեղափոխվել և օգտագործվել է գյուղատնտեսական նպատակներով: Տեղամասում մնացած բուսահողային շերտը շատ փոքր հզորության է (մինչև 10սմ) կամ էլ բացակայում է: Տեղամասի տարածքում ավազակավային շերտը նույնպես բավականին մեծ մակերեսով, հատվածային, անկանոն խախտված է: Օգտակար հանածոն ծածկող շերտերը խիստ սահմանափակ փոքր հատվածներում՝ հիմնականում հայցվող տարածքի եզրերով, կարող է մնացած լինեն թմբերի տեսքով՝ մինչև 1.0 մ հզորությամբ բուսահողային և կավավազային առաջացումներով:

Դարավանդային առաջացումները ներկայացված են Արարատյան դաշտին բնորոշ վերին չորրորդականի լճային նստվածքներով: Ուսումնասիրությունների տեղամասի սահմաններում, դրանք ներկայացված են ավազների, կոպճային ավազների ու կոպիճների նրբաշերտերի շերտախմբով և դրանց հիմնատակող կավային շերտով:

Տեղամասում ավազակոպճային խառնուրդի հզորությունը սպասվում է մոտ 10մ սահմաններում, որի հատակում առկա են հիմնատակող կավային շերտեր: Վերջիններս չեն կարող հանդիսանալ օգտակար հանածո:

Համաձայն ՀՀ ՏԿԵ նախարարի 2021թ. օգոստոսի 11-ի թիվ 06-Ն հրամանով ամրագրված «Ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» ցուցումների, հայցվող տեղամասը նախնական գնահատմամբ երկրաբանական կառուցվածքի բարդությամբ դասվում է ավազի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրերի 1-ին խմբին՝ ավազի և ավազակոպճային, գլաքարային ապարների ալյուվիալ հանքավայրեր՝ օգտակար ստվարաշերտի կայուն կառուցվածքով, հզորությամբ և որակով:

Հիդրոերկրաբանական և լեռնաերկրաբանական պայմանները

Տեղամասի տարածքում ԱԿԽ զանգվածը գտնվում է ջրային միջավայրում, գրունտային ջրերի մակարդակը կարող է հասնել մակերեսից մինչև 2-4մ խորությունը:

Գրունտային ջրերի ներթափանցումը փորվածքների տարածք անխուսափելի է:

Ջրերի նվազագույն մակարդակը դիտվում է ամռան երկրորդ կեսին և վաղ գարնանը: Տեղամասի մակերեսը մեծամասամբ ջրագուրկ է՝ բացառությամբ արևելյան հատվածում առկա հին փորվածքների, որոնք լցված են ջրով: Ջրերի կապիլյար բարձրացման հետևանքով ԱԿԽ զանգվածը նույնիսկ տարվա ամենաչոր ժամանակ (օգոստոսին) գտնվում է խոնավ (ջրհեղված) վիճակում:

Տեղամասի տարածքում օգտակար հանածոն ծածկող հողաբուսական և կավավազային ապարների շերտի բացակայությունը (հիմնականում), օգտակար հաստվածքի շերտաձև տեղադրումը, գրունտային ջրերի մոտ լինելը, մակերևութային ջրերի առկայությունը և տեխ. անվտանգության նկատառումներից ելնելով՝ նախատեսվում է տեղամասի հետախուզումն իրականացնել երկար թևերով

էքսկավատորով հետախուզահորերի անցման միջոցով՝ հետախուզման համար ընդգրկելով օգտակար հանածոն ամբողջ հզորությամբ:

3.4. Մեյսմիկ պայմանների բնութագիր


Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի հավելված 1-ի և հավելված 2-ի՝ տեղամասի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 7):



Նկար 7.

3.5. Կլիմա

Տարածքը ներառված է մեկ՝ չոր ցամաքային կլիմայական գոտում (նկար 8), ցուրտ ձմեռով և շոգ ամառով:



Նկար 8. Կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզ

Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է -31.4°C , բացարձակ առավելագույնը՝ 41.5°C : Ըստ օդերևութաբանական կայանի տվյալների՝ ձնածածկույթի առավելագույն տասնօրյակային բարձրությունը կազմել է 42սմ, տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը՝ 38, ձյան մեջ ջրի առավելագույն քանակը՝ 92մմ: Արարատյան դաշտավայրի և շրջակա լեռնաշղթաների միջև ջերմային կոնտրաստները առաջացնում են լեռնա-դաշտավայրային ուժեղ քամիներ, հատկապես ամռանը, իսկ ձմռանը հարթավայրի սահմաններում դիտվում է թույլ քամիներ առանց հողմի:

Ստորև աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանի, քամիների, տեղումների վերաբերյալ (ըստ ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմեր»-ի, մոտակա «Արմավիր» օդերևութաբանական կայանի տվյալների):

Աղյուսակ 1.

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
75	70	62	56	56	50	46	47	51	61	70	76

Աղյուսակ 2.

Օդի ամսական և տարեկան ջերմաստիճանները

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
-4.1	-1.3	5.4	12.5	17.4	21.9	25.8	25.3	20.2	13.0	5.7	-0.8	11.8	-31.4	41.5

Աղյուսակ 3.

Տեղումների քանակը ըստ ամիսների, մմ

Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	միջին
18	18	23	33	43	24	13	9	11	25	20	17	254
19	21	26	30	47	21	38	31	35	30	28	20	47

Աղյուսակ 4.

Ձնածածկույթը

Ձնածածկույթ		
Առավելագույն տասնօրյա- կային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածած- կույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավե- լագույն քանակը, մմ
42	38	92

Աղյուսակ 5.

Քամիներ

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
		Ուղղությունները										
		Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
917.1	հունվար	7	5	17	8	9	8	28	18	0.5	0.9	15
		2.2	2.2	1.9	1.9	1.8	2.3	2.5	2.8			
	ապրիլ	5	7	28	11	9	9	20	11	1.3		
		2.8	3.4	2.5	2.7	2.7	3.7	3.0	3.7			
	հուլիս	3	8	31	16	11	7	16	8	1.1		
		2.1	2.5	1.9	2.2	1.1	2.6	2.7	2.6			
	հոկտեմբեր	5	4	23	16	9	7	22	14	0.6		
		2.2	2.8	1.9	2.9	2.8	3.6	3.1	3.8			

Աղյուսակ 6.

Արևափայլի տևողությունը, ժամ

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
71	111	162	177	236	310	328	314	269	186	139	67

Աղյուսակ 7.

Անարև օրերի քանակը, օր

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
16	10	7	5	1	0.5	1	0.1	1	5	7	17

3.6. Մթնոլորտային օդ

Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի տարածքում, ինչպես նաև ագդակիր Եղեգնուտ բնակավայրում շրջակա միջավայրի պետական մոնիթորինգի համակարգում ներառված մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան չկա: Տեղամասի ենթաշրջանը բացառապես գյուղատնտեսական է: Տարածքում չկան մթնոլորտային օդի աղտոտման աղբյուր հանդիսացող գործող խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ:

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևաբանության և մոնիթորինգի կենտրոն»-ի կողմից մշակվել են ժամանակավոր առաջարկություններ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները:

Աղյուսակ 8.

«Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Տեղամասի տարածքն ընդգրկված է Մեծամոր խոշորացված համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական սահմաններում: Տեղամասից մինչև 2.5-3.0 կմ հեռավորության վրա գտնվող բնակավայրերում մշտական բնակչության ընդհանուր քանակը չի գերազանցում 10.0 հազարը, հետևաբար, տեղամասի տարածքի համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշ պետք է ընդունել փոշի 0.071մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.006 մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.023մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.8մգ/մ³:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնապահպանական միջոցառումների կառավարման պլանը կազմելիս որպես սահմանանիշ կարող են ընդունվել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն հրամանի հավելված 1-ով ամրագրված նորմատիվները: Ըստ նշված փաստաթղթի՝ բնակավայրերում անօրգանական փոշու (SiO₂ պարունակությունը 70% և ավելի) առավելագույն միանվագ ՍԹԿ պետք է կազմի 0.15մգ/մ³, միջին օրեկան ՍԹԿ՝ 0.05մգ/մ³:

3.7. Ջրային ռեսուրսներ

Եղեգնուտի ԱԿՖ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի տարածքում խոշոր ջրագրական միավորը Արաքս գետն է, որը գտնվում է տեղամասից մոտ 5.5-6.0կմ դեպի հարավ: Շրջանի տարածքով է հոսում նաև Մեծամոր գետը, որը գտնվում է 5.5-6.0կմ հեռավորության վրա դեպի հյուսիս և արևելք:

Արաքս գետը սկիզբ է առնում Բյուրակն հրաբխային բարձրավանդակից (մոտ 3000մ բարձրությունից), մինչև Արարատյան դաշտ մտնելը հոսում է նեղ կիճերով, տեղ-տեղ՝ լայնացված հովտով, ունի մեծ անկում: Գետի երկարությունը 1720կմ է, ավազանը՝ 102 հազ.կմ²: Այն սնվում է ձնհալքի, անձրևների և ստորերկրյա ջրերից: Հորդանում է մարտից հունիս ամիսներին, առավելագույն ծախսը դիտվում է մայիսին: Այս շրջանում ջրի ծախսը կազմում է միջինը 1690մ³/վրկ: Ջրի առավելագույն նվազումը տեղի է ունենում օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, երբ ջրի ծախսը նվազում է մինչև 16.6 մ³/վրկ: Ջրի միջին տարեկան ծախսը կազմում է 86.2մ³/վրկ:

Արաքսի ջրերը հայտնի են պղտորության բարձր մակարդակով: Ջրի տարեկան պղտորությունը կազմում է միջինը 1200գր/մ³, բերվածքների միջին ծախսը 200կգ/վրկ: Գարնանային վարարման ժամանակ առավելագույն պղտորությունը կազմում է 26000 գր/մ³ և տևում է մեկ շաբաթ, բերվածքների ծախսը կազմում է 3100 կգ/վրկ: Առաջին հորդացումը կապված է ցածրադիր վայրերի ձնհալքի և գարնանային անձրևների հետ, երկրորդը ավելի երկարատև է ու բուռն, առաջանում է լեռներում ձնհալքի հետևանքով: Երրորդ թույլ արտահայտված հորդացումը կապված է աշնանային անձրևների հետ: Արաքս գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները բերված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 9.

Գետը	Ծախսը, մ ³ /վ	Տարեկան հոսքը, մլն.մ ³	Հոսքի մոդուլը, լ/վ կմ ²	Հոսքի շերտի բարձրությունը, մմ	Հոսքի գործակիցը
Արաքս	86.2	272.4	3.90	123	-

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. ամփոփագրի տվյալների՝ Արաքս գետի 6 դիտակետից վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, գերազանցվել են, ամոնիում, նիտրիտ,

սուլֆատ իոնների, պղնձի, քրոմի, նիկելի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի ՍԹԿ-ները: Արաքս գետի 2 դիտակետում իրականացվել են հատակային նստվածքների ուսումնասիրություններ: Ստացված ցուցանիշներն ամփոփագրում բերված չեն:

Արաքս գետի ջրերի որակը ներկայացվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2023թ. IV եռամսյակի Տեղեկագրի տվյալների, ըստ որի՝ Արաքս գետի 6 դիտակետից վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, գերազանցվել են, ամոնիում, նիտրիտ, սուլֆատ իոնների, նատրիումի, մագնեզիումի, ցինկի, պղնձի, քրոմի, նիկելի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի ՍԹԿ-ները:

Հոկտեմբեր		Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)															
Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)		Լուծված թթվածին, ՍԹԿ-6 մգ/լ	Թթվածնի 5-րդ տ կենսաքիմիական պահանջարկ, ՍԹԿ-3 մգ/լ	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ-30 մգ/լ	Ամոնիում իոն, ՍԹԿ-0,39 մգ/լ	Նիտրիտ իոն, ՍԹԿ-0,024 մգ/լ	Սուլֆատ իոն, ՍԹԿ-100 մգ/լ	Կալիում ՍԹԿ- 80 գ/լ	Նատրիում ՍԹԿ- 120 մգ/լ	Մագնեզիում, ՍԹԿ-40 մգ/լ	Ցինկ, ՍԹԿ-0,01 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ-0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ-0,001 մգ/լ	Նիկել, ՍԹԿ-0,01 մգ/լ	Մանգան, ՍԹԿ-0,01 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ-0,001 մգ/լ	Երկաթ, ՍԹԿ-0,5 մգ/լ
Հրազդան գետի թափման կետից վերև	1.5	0.6	–	12.2	11.2	–	–	–	1.5	–	1.7	9.9	6.8	5.8	18.7	1.9	9.1
Հրազդան գետի թափման կետից ներքև	1.3	–	–	10.0	15.6	–	–	–	1.8	–	1.3	6.2	6.8	7.5	20.9	2.3	9.9
0.5 կմ ք. Արարատից ներքև	–	–	–	3.1	9.5	–	–	–	1.7	–	–	4.1	5.2	8.9	18.2	2.0	11.3
2 կմ ք. Ագարակից հարավ	–	–	1.2	–	1.9	2.8	1.4	3.3	1.6	–	–	8.0	10.4	7.0	18.0	1.8	10.0
2.5 կմ ք. Ագարակից հարավ-արևելք	–	–	–	2.6	1.9	2.4	1.2	2.9	1.6	–	–	8.6	16.7	6.5	20.1	2.3	16.2

Նոյեմբեր		Կոնցենտրացիաների գերազանցումը ՍԹԿ-ից (անգամ)															
Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)		Լուծված թթվածին, ՍԹԿ-6 մգ/լ	Թթվածնի քիմիական պահանջ, ՍԹԿ-30 մգ/լ	Ամոնիում իոն, ՍԹԿ-0,39 մգ/լ	Նիտրիտ իոն, ՍԹԿ-0,024 մգ/լ	Սուլֆատ իոն, ՍԹԿ-100 մգ/լ	Կալիում ՍԹԿ- 50 գ/լ	Նատրիում ՍԹԿ- 120 մգ/լ	Մագնեզիում, ՍԹԿ-40 մգ/լ	Ցինկ, ՍԹԿ-0,01 մգ/լ	Պղինձ, ՍԹԿ-0,001 մգ/լ	Քրոմ, ՍԹԿ-0,001 մգ/լ	Նիկել, ՍԹԿ-0,01 մգ/լ	Մանգան, ՍԹԿ-0,01 մգ/լ	Վանադիում, ՍԹԿ-0,001 մգ/լ	Երկաթ, ՍԹԿ-0,5 մգ/լ	Ալյումին, ՍԹԿ-0,04 մգ/լ
0.9 կմ գ. Հուշակերտից ներքև	–	–	3.3	–	–	–	–	–	–	1.3	8.4	5.2	1.5	10.1	13.4	2.1	34.5
Հրազդան գետի թափման կետից վերև	–	–	2.9	3.7	–	–	–	1.5	–	–	4.2	5.9	–	6.4	16.3	1.7	10.2
Հրազդան գետի թափման կետից ներքև	1.3	–	6.8	7.1	–	–	–	1.9	–	–	4.0	5.6	–	4.8	19.1	1.3	4.1
0.5 կմ ք. Արարատից ներքև	–	–	2.6	5.6	–	–	–	1.6	–	–	7.7	6.4	–	12.5	17.6	2.6	20.3
2 կմ ք. Ագարակից հարավ	–	–	1.7	1.8	2.3	1.3	3.1	1.5	–	–	4.1	4.5	–	5.8	14.1	1.5	7.0
2.5 կմ ք. Ագարակից հարավ-արևելք	–	1.2	1.5	2.0	2.2	–	–	2.7	1.5	–	7.1	4.9	–	6.1	14.7	1.7	8.2



Նկար 9

Մեծամոր գետի ակունքն ընդունված է համարել Այդր լճից արևմուտք՝ մոտ 860 մ բացարձակ բարձրության վրա գտնվող ճահճուտները, սակայն գետի սնման գործում մեծ է հատկապես Այդր լճի դերը: Գետը հոսում է Արարատյան դաշտով և թափվում է Արաքս գետ՝ գետաբերանից 625 կմ վերև: Գետի երկարությունը 38 կմ է, ունի ոչ մեծ թեքություն, միջինը՝ 1 մ/կմ: Ակունքին մոտ նրա մեջ է թափվում Մաստարա սելավը, որը սկիզբ է առնում Արագածի լեռնազանգվածի արևմտյան լանջերի 3600 մ բարձրությունից և ունի 98 կմ երկարություն: Մեծամորի գետաբերանից 26 կմ վերև թափվում է Քասախ վտակը: Եթե չհաշվենք վտակների ազդեցությունը, Մեծամոր գետն ունի բացառապես ստորերկրյա սնում գետային հոսքի բարձր բնական կարգավորվածությամբ: Այդ և հիդրոլոգիական այլ բնութագրերով խիստ տարբերվում է հանրապետության մյուս գետերից: Մեծամորի գետային հոսքը տարվա ընթացքում բաշխվում է գրեթե հավասարաչափ:

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ և Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք հատվածներում հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Ռանչյար գյուղից ներքև հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Դիտացանցը ներկայացվում է նկար 10-ում:

Տեղամասում բնական աղբյուրներ չկան: Տեղամասի արևելյան հատվածում առկա են փոքր լճակներ, որոնք առաջացել են նախկինում կատարված շահագործական փորվածքների տեղերում: Դրանց ջուրը պղտոր է, ճահճային հոտով, տեսողական գնահատմամբ չունի մակերևութային հոսք: Տեղամասում մակերեսային


ջրային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չկան, դրանք կարող են ստացվել միայն Ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրության փուլում՝ մշտադիտարկումների արդյունքներով:



Արարատյան դաշտի սահմաններում է գտնվում ստորերկրյա քաղցրահամ խմելու ջրերի արտեզյան ավազանը, որը տարածքի էկոլոգիական համակարգի որոշիչ բաղադրիչն է: Ավազանը կազմված է ստորերկրյա ջրերի հինգ ավազաններից (նկար 11):

Արարատյան արտեզյան ավազանում (ԱԱԱ) առանձնացվում են ստորերկրյա ջրերի երկու ջրատար հորիզոններ (համալիրներ)՝ գրունտային և պայմանականորեն երկու ճնշումային:

Գրունտային ջրերն ԱԱԱ-ում տարածված են գրեթե ամենուրեք և տեղադրված են 0,5-60,0 մ խորությունների միջակայքերում: Ջրերի շարժման ուղղությունը համընկնում է Արարատյան դաշտի անկման ուղղության հետ և ուղղված է դեպի Արաքս գետը: Գրունտային ջրերի հորիզոնները կապված են չորրորդական հասակի ավազակավային, կավավազային, ավազային և խճամանրագլաքարային նստվածքների հետ:



Նկար 11.

Արարատյան դաշտի միջլեռնային իջվածքի ստորերկրյա ճնշումային ջրերն ըստ ձևավորման պայմանականորեն բաժանվում են ծակոտկեն ջրերի՝ կապված գետալճային նստվածքների հետ, և ճեղքածակոտկեն և ճեղքային ջրերի՝ կապված լավային ապարների հետ:

Ըստ ստորերկրյա ջրերի մակարդակների տեղադրման պայմանների ԱԱԱ-ում առանձնացվում են՝

ա) հողի մակերևույթից ցածր (բացասական) մակարդակ ունեցող արտեզյան ջրերի գոտին, որն ընդգրկում է Արարատյան դաշտի ծայրամասերը և Հոկտեմբերյանի իջվածքի արևմտյան մասը,

բ) հողի մակերևութից բարձր մակարդակ (դրական ճնշում) ունեցող արտեզյան ջրերի գոտին, որն ընդգրկում է Արարատյան դաշտի կենտրոնական մասը, որտեղ հորերն ինքնաշատրվանող են:

Պայմանականորեն բաժանված երկու ճնշումային ջրատար հորիզոնները կապված են ջրատար և թույլ ջրաթափանց ապարների իրար հաջորդող բարդ շերտավորված համակարգի հետ, որոնք չունեն կայուն հզորություն և ջրաթափանցելիություն ու ստեղծում են մեկ ջրատար համակարգ: Միանման են նաև երկու ճնշումային հորիզոններում ձևավորվող ջրերի շահագործողական պաշարների ձևավորման, տեղափոխման և կուտակման պայմանները: ԱԱԱ-ին բնորոշ է ճնշումների ավելացումն ըստ խորության, որն իջվածքի սահմանների մեծ մասում կապված է ստորերկրյա ջրերի վերընթաց բեռնաթափումով:

Աղյուսակ 10.

Արարատյան արտեզյան ավազանի ջրային ռեսուրսները

Ստորերկրյա ջրերի ավազանը	Աղբյուրների հաստատված պաշարները, A+B կարգի, լ/վրկ	Հիմնական հորատանցքերի հաստատված պաշարները, A+B կարգի, լ/վրկ
Արագդայանի իջվածք		2138.9
Արտաշատի իջվածք	224.5	3056.7
Գայ-Հայկաշենի հանքավայր		5063.6
Հոկտեմբերյանի իջվածք	18436.6	31880.8
Սովետաշենի բարձրացում	3260.4	9601.8
Ընդամենը	21921.2	51741.8

Ըստ քիմիական կազմի ԱԱԱ-ի ստորերկրյա ջրերը հիմնականում հիդրոկարբոնատային, նատրիում-կալցիումային, երբեմն մագնեզիումային, սուլֆատային և նատրիումային են: Անհրաժեշտ է նշել, որ տարբեր կառուցվածքներում տարածված են տարբեր որակի ջրեր: Սա պայմանավորված է ինչպես բուն ԱԱԱ-ում, այնպես էլ սնման և տեղափոխման մարգերում առկա տարատեսակ ապարների լիթոլոգիական և պետրոգրաֆիական կազմով:

Ստորերկրյա ջրային ռեսուրսները, որոնք հիմնականում օգտագործվում են խմելու, ինչպես նաև Արարատյան դաշտում ոռոգման և ձկնաբուծության նպատակով, Արարատյան ՋԿՏ-ի մաս են կազմում: Ստորերկրյա ջրերի սնման աղբյուրը՝ մթնոլորտային տեղումներն են: Ջրերի ձևավորումը կատարվում է մերձակերեսային ապարների հողմահարման կեղևում, որոնց հզորությունը 50 մ և

ավել է: Նշված խորությունից ներքև կոմպլեքսը գործնականում անջրաթափանց է: Էռոզիոն ցանցով կտրտված ռելիեֆի պայմաններում կոմպլեքսի ջրերը բեռնաթափվում են ցածր ծախսի աղբյուրների տեսքով (մինչև 0.5 լ/վ): Աղբյուրներին բնորոշ է ծախսի խիստ փոփոխական կամ ժամանակավոր բնույթը: Դրանց աննշան մասը կապտաժավորված է և օգտագործվում է խմելու ջրամատակարարման համար: Ջրատար հորիզոնները տեղակայված են միջլեռնային գոգավորություններում: Ստորերկրյա ջրերը և ճնշումային ջրատար հորիզոնները Արարատի արտեզյան ավազանում գոյություն ունեն մինչև 500 մ խորության վրա: Ճնշումային ջրատար հորիզոնները որոշ տեղերում դուրս են գալիս 5-ից 100 լ/վ արագությամբ:

Հարկ է նշել, որ Արաքս և Մեծամոր գետերը հոսում են տեղամասից ավելի քան 5.5կմ հեռավորությամբ, հետևաբար, հայցվող տարածքում իրականացվելիք աշխատանքները որևէ կերպ չեն ազդելու գետերի ջրերի որակի և քանակի վրա:


Տեղամասի տարածքում, ըստ նախնական դիտարկումների, գրունտային ջրերի հորիզոնները սպասվում են 2-4մ խորության վրա: Տեղամասի հիդրոերկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները, այդ թվում նաև գրունտային ջրերի որակի և մակարդակի վերաբերյալ տվյալները կուսումնասիրվեն երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում:

Աշխատանքների արդյունքում՝ կարող է դրսևորվի աննշան ազդեցություն գրունտային ջրերի պղտորության, կախյալ մասնիկների պարունակության վրա:

Տեղամասում բնական աղբյուրներ չկան:

3.8. Հողային ծածկույթ

Տեղամասի շրջանում զարգացած են աղուտ-ալկալի մարգագետնային գորշ խորը պրոֆիլային, ինչպես նաև մարգագետնային ոռոգելի գորշ հողերը: Մարգագետնային գորշ ոռոգելի հողերը ձևավորվել են Արարատյան հարթավայրի բնահողային շրջանում՝ Արաքս գետի և նրա ձախակողմյան վտակների բերվածքների վրա, մարդու ներգործության պայմաններում: Այն հատվածներում, որտեղ հանքայնացված խորքային ջրերը մոտ են մակերեսին, առաջացել են նաև հիդրոմորֆ աղուտ-ալկալի հողեր: Այս հողերը տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում (նկար 12):



Նկար 12.

Այս տիպի հողերում հողագոյացնող պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում: Մարգագետնային գորշ հողերում հումուսի քանակը կազմում է 3-3.5% : Ոռոգելի խոնավ-մարգագետնային գորշ աղուտ-ալկալի հողերը աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավորված մեխանիկական կազմով: Պրոֆիլում պարզորոշ առանձնացվում է մակերեսային աղային հորիզոնը, որտեղ հեշտ լուծվող աղերի քանակը 2% և ավելի է, սակայն դեպի ստորին շերտերը նրա պարունակությունը նվազում է: Հողերի գերակշռող մասին հատկանշական է փոխանակային նատրիումի բարձր պարունակությունը (առանձին շերտերում 21-23 մգ/էկվ):

Տեղամասի տարածքի հողերը խորհրդային տարիներին հանվել և տեղափոխվել են գյուղատնտեսական նպատակներով: Տեղամասում լցակայանավորված, պահեստավորված և պահպանված հողեր չկան:

Ընդհանրապես հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ մետաղաձուլական գործարանները, արդյունաբերական և կենցաղային թափոնները, ժամանակակից գյուղատնտեսությունը, տրանսպորտը: Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Գյուղատնտեսական աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ հանքային պարարտանյութերը, թունաքիմիկատները, անասնապահական համալիրները: Հանքային պարարտանյութերի կանոնների խախտման դեպքում մեծանում է հողի թթվայնությունը, փոխվում է հողային օգտագործման օրգանիզմների տեսակային կազմը, խախտվում է նյութերի շրջապտույտը, քայքայվում է հողի կառուցվածքը:

Տարածքի հողային ծածկույթի աղտոտվածության վերաբերյալ որևէ բաց տեղեկատվություն չկա. այդ տեղեկատվությունը կարող է ստացվել Ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրություն ստանալուց հետո հողերի մշտադիտարկման արդյունքներով: Տեղամասի տարածքը որպես վարելահող չի օգտագործվում, չի ոռոգվում, չի պարարտացվում: Արդյունաբերական և կենցաղային թափոններ այստեղ չկան, և այստեղ ընդհանուր շրջանի համանման տարածքների հողերի ֆոնային աղտոտվածությունից խիստ մեծ տարբերություններ չեն սպասվում:

Այս առումով ուղղակի նշենք, որ որևէ գործունեության արդյունքում աղտոտող նյութերի կոնցենտրացիաները չպետք է գերազանցեն ստորև բերվող աղյուսակում նշված տվյալներին:

Հողում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ

(ՀՀ Առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի N 01-Ն հրաման)

<i>Նյութերի անվանում</i>	<i>Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա, գ/կգ</i>
<i>Վանադիում</i>	<i>0,15</i>
<i>Արսեն</i>	<i>0,002</i>
<i>Կապար</i>	<i>0,032</i>
<i>Ծարիր</i>	<i>0,0045</i>
<i>Կոբալտ</i>	<i>0,005</i>
<i>Պղինձ</i>	<i>0,003</i>
<i>Նիկել</i>	<i>0,004</i>
<i>Ցինկ</i>	<i>0,023</i>
<i>Քրոմ</i>	<i>0,006</i>


3.9. Բուսական և կենդանական աշխարհ

Շրջանի բուսականությունը ներկայացված է համեմատաբար երիտասարդ, ստորին չորրորդական դարաշրջանից ՀՀ տարածքում իհայտ եկած աղասեր անապատային բուսատեսակներով (նկար 13):

Շրջանում նշվել են օշան հավամրգանման (*Salsola ericoides* Bieb.), սաքսազան կոնաձև (*Halocnemum strobilaceum* Pall. Bieb), անցողունիկ հեռացած (*Puccinellia distans*), սեզ սողացողը (*Elytrigia repens*), հազարատերևուկ նեղատերև (*Achillea tenuifolia*), դաշտավլուկ սոխուկային (*Poa bulbosa*), օշինդր բուրավետը (*Artemisia fragrans* Willd.), լվածադիկ արծաթատերևը (*Tanacetum argyrophyllum* C. Koch. Tzvel.), փշոտ կապարը (*Capparis spinosa*) և սովորական եղեգը (*Phragmites communis*), որն աճում է ջրերի հարևանությամբ՝ առավել խոնավ հատվածներում:

Հայցվող տարածքը գտնվում է ակտիվ տնտեսական յուրացման գոտում: Ինչպես նշվել է՝ տեղամասի տարածքի հողերը խորհրդային տարիներին հանվել և տեղափոխվել են գյուղատնտեսական նպատակներով, իսկ հարակից տարածքները և շրջապատող լանջերը տարիների շարունակ օգտագործվում են գյուղատնտեսական նպատակներով: Այս ամենը հանգեցրել է նրան, որ ուսումնասիրման տարածքներում բնական էկոհամակարգերը ներկայումս խիստ փոփոխված և դեգրադացված են:

Բուսականության հիմնական տիպերի տարածման սխեմատիկ քարտեզը բերված է ստորև, նկարում:



Նկար 13

Հարկ է նշել, որ ուսումնասիրվման տեղամասում փաստված չեն ինչպես հազվագյուտ էկոհամակարգեր, այնպես էլ կենդանիների և բույսերի հազվագյուտ տեսակներ: Տեղամասի տարածքը կուսումնասիրվի երթուղիներով՝ ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով:

Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշման, Արմավիրի մարզում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ, որոնց վերաբերյալ տվյալները ներկայացված են ստորև:

- բորակաթուփ Շոբերի (*Nitraria schoberi* L.): վտանգված տեսակ է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: Կատեգորիան՝ EN B 1 ab(i,ii,iii)+ 2 ab(i,ii,iii):
- կալախոտ կասպիական (*Kalidium caspicum* (L.) Ungern-Sternb.) - վտանգված տեսակ է: Հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանից: Տարածման շրջանի մակերեսը 5000 կմ²-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 կմ²-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ աղուտների շարունակվող յուրացման հետևանքով:

Խոշոր կաթնասուններ տեղամասի տարածքում չեն արձանագրվել: Տարածքում հայտնաբերվել են մանր կրծողներ, թռչուններ: Թռչուններից դիտարկվել է սովորական կաչաղակ և տնային ճնճղուկ, հատուկենտ՝ սովորական դաշտամուկ:

Տարածքը կուսումնասիրվի երթուղիներով՝ ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ հայտնաբերելու նպատակով: Ըստ ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշման, Կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներից տեղամասի շրջանում հայտնի են.

- լայնակտուց բադ (*Anas clypeata* Linneus) – կլոր տարի՝ չվահյուր: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii),
- ոտնացուպիկ (*Himantopus himantopus*) – խոցելի տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով:

- Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1,
- թամբակիր ճպուռ (*Hemiphanax ephippiger*) – հազվագյուտ, ներկայացված է արեալի սահմանագրին գտնվող մեկուսացած պոպուլյացիայով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ B1ab(iii)+2ab(iii),
 - մեհելիի պայտաքիթ չղջիկ (*Rhinolophus mehelyi* Matschie) - տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable 14e» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ B1a+2ab(iii),
 - գանգրափետուր հավալուսն (*Pelecanus crispus* Bruch) - հազվագյուտ, կրճատվող թվաքանակով տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքերում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A2ce+3ce+4ce» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN D,
 - Մեծ ձկնկուլ *Phalacrocorax carbo* Linnaeus, կարգավիճակը՝ հազվագյուտ, անհետացող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: ԲՊՄՄ Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii):
 - սպիտակաճակատ սազ (*Anser albifrons* (Scopoli, 1769)) - չվող, բնադրող, ձմեռող, քիչ տարածված, հազվագյուտ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

Տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքերում գրանցված՝ վերը նշված տեսակները չեն դիտարկվել:

3.10. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև հայցվող տեղամասին անմիջական հարակից տարածքներում:

Արմավիրի մարզում գտնվում է Որդան կարմիր արգելավայրը, որը կազմավորվել է 1987 թվականին, ունի 220 հա տարածք: Բաղկացած է երկու առանձին տեղամասերից՝ Արագափի գյուղական համայնքի հյուսիս-արևմտյան մասում (198.33 հա), որը գտնվում է հայցվող տեղամասից նվազագույնը 2.3 կմ դեպի հարավ-արևմուտք և Ջրառատի գյուղական համայնքի հյուսիսային մասում (21.52 հա), որը գտնվում է հայցվող տեղամասից մոտ 9 կմ հեռավորության վրա:

Արգելավայրի տարածքում իրականացվող հիմնական գործառնություններն են՝
ա) որդան կարմիր, որդանախոտի, ինչպես նաև էկոհամակարգերի այլ բուսական և կենդանական տարրերի էկոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, համակեցությունների վիճակի մոնիթորինգը, որդան կարմիր ու որդանախոտի գիտականորեն հիմնավորված վերարտադրությունը.

բ) արգելավայրի ռեժիմին համապատասխան զբոսաշրջության տարբեր ձևերի կազմակերպումը:

Համաձայն 2006թ.-ի նոյեմբերի 27-ի ՀՕ-211-Ն բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի 18 «Պետական արգելավայրերի պահպանության ռեժիմը» և 19 «Բնության հուշարձանների պահպանության ռեժիմը» հոդվածների, համապատասխանաբար, պետական արգելավայրի տարածքում արգելվում է ցանկացած գործունեություն, որը խախտում է արգելավայրի էկոհամակարգերի կայունությունը կամ սպառնում է հատուկ պահպանության կարիք ունեցող էկոհամակարգերի, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը և բնության հուշարձանի զբաղեցրած տարածքում արգելվում է ցանկացած գործունեություն, որը սպառնում է դրա պահպանությանը:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է կենսաբազմազանության պահպանությանը վերաբերող Եվրախորհրդի Բեռնի կոնվենցիան, որի շրջանակներում ՀՀ տարածքում «Էմերալդ» ցանցի ստեղծման նպատակով առանձնացվել են բնապահպանական տեսակետից 23 արժեքավոր տարածքներ:

Հայցվող տեղամասի տարածքը չի գտնվում «Էմերալդ» ցանցի թեկնածու-տարածքներից որևիցե մեկի սահմաններում:

3.11. Անտառային ռեսուրսներ

Տեղամասի տարածքում և շրջանում անտառներ չկան:

3.12. Բնության հուշարձաններ

Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի՝ բնության հատուկ պահպանվող տեսակ է բնության հուշարձանը: ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Արմավիրի մարզում հաշվառված բնության հուշարձանների ցանկը, ինչպես նաև դրանց գտնվելու վայրը ներկայացված է աղյուսակ 11-ում :

Աղյուսակ 11.

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	2	3
1.	«Մեծամոր» լիճ	Արմավիրի մարզ, Տարոնիկ գյուղից մոտ 3 կմ հս-արմ
2.	«Ավազասեր (պսամոֆիլ) բուսականություն»	Արմավիրի մարզ, քաղ. Վաղարշապատ, Զվարթնոց տաճարի մոտ
3.	«Զրաճահճային բուսականություն»	Արմավիրի մարզ, Մեծամոր լիճ

Տեղամասի տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն, տարածքին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը «Մեծամոր» լիճն է՝ «Զրաճահճային բուսականությամբ», հեռավորությունը կազմում է մոտ 7կմ:

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Ենթակառուցվածքներ

Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի տարածքը տարածական առումով գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում՝ Մեծամոր խոշորացված համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական սահմաններում:

Ստորև բերվում են Արմավիրի մարզի, Մեծամոր համայնքի և Եղեգնուտ բնակավայրի վերաբերյալ տեղեկություններ՝ վերցված Արմավիրի մարզպետարանի <http://armavir.mtad.am>, Մեծամորի համայնքապետարանի <https://mecamorcity.am/> և ՀՀ Վիճակագրական Կոմիտեի <https://www.armstat.am/am> պաշտոնական կայքէջերից:

Մարզի ընդհանուր տարածությունը կազմում է 1231 կմ², ՀՀ տարածքի 4.1 %-ը: Բնակչությունը՝ 266.6 հազար մարդ (2023 թ. հունվարի 1-ի դրությամբ), որից քաղաքային՝ 82.9 հազար մարդ, գյուղական՝ 183.7 հազար մարդ:

Արմավիրի մարզը տարածքով ամենափոքր, սակայն խիտ բնակեցված և բնակչության թվաքանակով ամենամեծ մարզն է ՀՀ-ում: Բնակչության խտությունը՝ 216 մարդ/կմ²:

Համայնքների թիվը՝ 8, որից՝ քաղաքներ 3, գյուղեր 95:

Մարզկենտրոնը՝ քաղաք Արմավիր, որի հեռավորությունը Երևանից 48 կմ է:

ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.՝ 9.0 %:

Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.՝ 31.1%:

Գյուղատնտեսական նշանակության հողեր 96 838.9 հա, այդ թվում՝ վարելահողեր՝ 39 765.2 հա:

Արմավիրի մարզը գտնվում է ՀՀ տարածքի արևմտյան հատվածում: Մարզը հյուսիսից սահմանակից է Արագածոտնի մարզին, արևելքից՝ մայրաքաղաքին, հարավ-արևելքից՝ Արարատի մարզին և արևմուտքից՝ պետական սահմանով, սահմանակից է Թուրքիային:

Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան-Արմավիր, Երևան-Քարակերտ և Երևան-Գյումրի, ինչպես նաև Երևան-Թբիլիսի երկաթուղին:

Արմավիրի մարզը հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ:

Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Անասնաբուծության բնագավառում հիմնականում զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բոստանաբուծությունը: Հիմնականում մշակվում են հացահատիկաբույսեր և բանջարաբոստանային մշակաբույսեր:

Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերք, խմիչքների արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

2022 թվականին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 6.3 %
- գյուղատնտեսություն 22.0 %
- շինարարություն 5.7 %
- մանրածախ առևտուր 4.2 %
- ծառայություններ 1.5 %:

Մարզում է գտնվում Հայկական ատոմային էլեկտրակայանը (Մեծամոր քաղաքի մոտակայքում), որը միակն է Հարավային Կովկասում և գտնվում է Երևանից 36 կմ արևմուտք և զբաղեցնում է 300 հա տարածք:

Մարզում է գտնվում ՀՀ սահմանային անցման կետերից մեկը՝ «Զվարթնոց» օդանավակայանը:

4.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր

Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի տարածքը գտնվում է Մեծամոր խոշորացված համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական սահմաններում:

Մեծամորը քաղաքային համայնք է Արմավիրի մարզում: Մարզկենտրոնից գտնվում է 8 կմ հյուսիս-արևելք, Երևան քաղաքից՝ 42 կմ արևմուտք: Հիմնադրվել է 1969 թ-ին որպես քաղաքատիպ ավան, Հայկական ատոմային կայանի բնակելի ավան, իսկ 1972 թ-ից կազմավորվել է որպես քաղաքատիպ ավան: 1995 թ-ի վարչատարածքային ռեֆորմից հետո դասվում է Հայաստանի քաղաքային բնակավայրերի շարքին:

ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքը, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համաձայն ընգրկում է հետևյալ բնակավայրերը՝ Մեծամոր քաղաքը, Ալաշկերտ, Ակնալիճ, Ամասիա, Այգեշատ, Արագափ, Արգավանդ, Արևիկ, Արմավիր, Արտաշար, Բամբակաշատ, Բերքաշատ, Գետաշեն, Եղեգնուտ, Երասխահուն, Զարթոնք, Հայկավան, Մարգարա, Մրգաշատ, Նալբանդյան, Նոր Արմավիր, Նոր Արտագերս, Նոր Կեսարիա, Նորապատ, Շենավան, Զանֆիդա, Զրաշեն, Վարդանաշեն, Տանձուտ, Տարոնիկ, Փշատավան գյուղերը: Համայնքի կենտրոնն է Մեծամոր քաղաքը, տարածքով ամենամեծ բնակավայրը՝ Եղեգնուտն է, ամենափոքրը՝ Զրաշենը, իսկ բնակչության թվաքանակով ամենամեծ բնակավայրը՝ ք. Մեծամորն է և գ. Մրգաշատը, ամենափոքրը՝ գ. Բերքաշատը: Մեծամոր համայնքը գտնվում է Արմավիրի մարզի հյուսիսային մասում: Համայնքը հյուսիսից սահմանակից է Արմավիր համայնքին, արևելքից՝ Խոյ և Արաքս

համայնքներին, հարավից՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանին, արևմուտքից՝ Բաղրամյան համայնքին:

Մեծամոր համայնքն ունի 80284 բնակչություն և զբաղեցնում է 32 622,07 հա տարածք:

Մեծամոր համայնքում են ապրում նաև բարեկամ եզդի համայնքի մեծ թվով ներկայացուցիչներ շուրջ 8627 բնակիչ, որոնց դերը համայնքի կյանքում նշանակալի է:

Համայնքում գործում են 18 նախադպրոցական և 33 հանրակրթական հաստատություններ, 2 արվեստի, 4 երաժշտական դպրոց, 1 մարզադպրոց, 1 բժշկական կենտրոն, 20 բժշկական ամբուլատորիա:

Մեծամոր համայնքում գործում են պարի, երգի, ժողովրդական գործիքների, դաշնամուրի, ջութակի, կիթառի, նկարչության, ասեղնագործության և դիզայնի խմբակներ:

Համայնքում գտնվող պատմամշակութային արժեքավոր օբյեկտներից առանձնանում են՝ Տարոնիկ բնակավայրում գտնվող «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, Արմավիր և Նոր Արմավիր գյուղերի միջև գտնվող Արգիշտիխինիլի քաղաքի փլատակները, ինչպես նաև ազգային փոքրամասնություն հանդիսացող եզդի ազգի կողմից Ակնալիճ բնակավայրում կառուցված եզդիական տաճարը՝ Տաուսե Մալակի և յոթ հրեշտակների տաճարը:

Համայնքում գործում են նաև փոքր և միջին ձեռնարկություններ, մասնավորապես՝ «Պռոշյանի» գինու-կոնյակի գործարանի Արմավիրի մասնաճյուղը, «Զրադացպանյան վիների» գինու արտադրամասը Բամբակաշատում, գյուղմթերքի վերամշակման արտադրամասեր որոնցից է «ՄԱՆ ԼԵՆԴ» չրերի և պահածոների արտադրամասը Բամբակաշատում: Համայնքում գործում են նաև տուֆի և ավազակոպճային խառնուրդի հանքավայրեր:

Մեծամոր քաղաքի բնակչության զգալի մասը աշխատում է ՀԱԷԿ-ում, որոշ մասն էլ կրթության, առողջապահության, սոցիալական սպասարկման, պաշտպանության, առևտրի և սպասարկման ոլորտներում: Գյուղական

բնակավայրերում բնակչության մեծամասնությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ, համայնքում զարգացած է այգեգործությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուստանային կուլտուրայի մշակումը:

Եղեգնուտ գյուղը զբաղեցնում է 2160.2հա տարածք, բնակչությունը կազմում է 2270 մարդ:

Գտնվում է Արմավիր քաղաքից մոտ 11 կմ հարավ-արևելք, ծովի մակարդակից 845 մետր բարձրության վրա:

Եղեգնուտ գյուղը հիմնականում բնակեցված է՝ Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ, Վան և Մուշ գավառներից գաղթած մեր հայրենակիցներով: Վերանվանվել է Եղեգնուտ 1946 թ. ապրիլի 4-ին:

Բնակչության մեծ մասը կազմում են հայերը, սակայն, հայերի հետ միասին՝ բարի-դրացիական հարաբերությունով ապրում են նաև եզդիներ:

Համայնքն ունի մոտ 460 տնտեսություն: Բնակչությունը հիմնականում զբաղվում է բանջարաբուծությամբ, պտղաբուծությամբ, անասնապահությամբ: Համայնքում կա 3 մատուռ, որոնք կառուցվել են համայնքի բնակիչների կողմից:

Համայնքի տարածքում գործում են 3 արդյունաբերական ձեռնարկություն: Համայնքն ունի գրադարան, միջնակարգ դպրոց և նախակրթական հաստատություն:

Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են գյուղ մտնող և գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը:

4.3.Պատմության, մշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1589-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արմավիրի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Եղեգնուտ բնակավայրում հաշվառված պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չկան:

Հայցվող տարածքում և դրա անմիջական մերձակայքում ու շրջապատում հնագիտական հուշարձանների վերգետնյա նշաններ չկան, չեն գտնվել նաև նյութական մշակույթի մնացորդներ: «ՆԱՆԱՏ» ՍՊԸ նկերության պատվերով 2025թ. ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և Ազգագրության Ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել է տեղագնություն, որի արդյունքում վերգետնյա պատմամշակութային շերտեր չեն փաստագրվել (Հավելված 2): Աշխատանքների որևէ փուլում դրանց հայտնաբերման պարագայում, աշխատանքները անհապաղ պետք է դադարեցվեն և փաստի մասին իրազեկվեն համապատասխան կառույցները:

ԱԿԽ տեղամասի տարածքում ծրագրվող աշխատանքները չեն կարող բացասաբար անդրադառնալ բավականին հեռու գտնվող պատմամշակութային հուշարձանների իրավիճակի վրա:

4.4 Տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ

Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի ուսումնասիրության աշխատանքների ծրագիրը և դրա շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մոտեցումները ներկայացվել է ազդակիր համայնքի բնակիչներին:

Ընկերության ներկայացուցիչների կողմից հնարավորինս մանրամասնորեն տրվել է նախատեսվող գործունեության բնութագիրը՝ երկրաբանական ուսումնասիրության դաշտային հիմնական աշխատանքները, օգտագործվող բնական ռեսուրսները ու նյութերը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, քննարկվել է շարունակվող աշխատանքներում բնակիչների ներգրավման հարցը:

Ազդակիր համայնքի բնակիչները ընդհանուր առմամբ դրական են վերաբերվել նախատեսվող գործունեությանը: Ընկերության ներկայացրած նախատեսվող գործունեության վերաբերյալ ստացվել է տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնությունը:

Այս պայմաններում հանքարդյունաբերության զարգացումը կարող է որոշակի դերակատարում ունենալ տնտեսական զարգացման գործընթացում: Սակայն դա հնարավոր է միայն հարակից համայնքների բնական միջավայրին չվնասելու պայմանով:

5.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում որոշակի ազդեցություններ են դրսևորվելու մթնոլորտի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային օդ.

Էքսկավատորի, մեքենաների տեղաշարժի, մակերևութային հետախուզական փորվածքների անցման ժամանակ տեղի է ունենալու վնասակար գազերի աննշան արտանետում: Փոշեգոյացում չի լինելու, քանի որ ԱԿԽ զանգվածի մակերևույթը մշտապես գտնվում է խոնավ վիճակում:

Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՄԹԿ) համապատասխանաբար կազմում է 0.8 մգ/մ³, 0.015 մգ/մ³, 0.3 մգ/մ³ և 0.05 մգ/մ³:

Նախնական հաշվարկների համաձայն, տեղամասի տարածքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Սանիտարա - պաշտպանիչ գոտի (ՄՊԳ)

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 01.02.2024թ.-ի №06-Ն հրամանի (որով հաստատվել են «ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» ՀՀ շինարարական նորմերը) հավելվածի՝ երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման համար սանիտարապաշտպանիչ գոտիներ նախատեսված չեն :

Ջրային ավազան.

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Տեղամասի տարածքում, ըստ նախնական դիտարկումների, մակերեսային ջրերը զբաղեցնում են սահմանափակ տարածքներ, որոնց անմիջական հատվածներում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարումը տեխնիկապես շատ դժվար է, ուստի՝ չի նախատեսվում: Գրունտային ջրերի հորիզոնները սպասվում են 2-4մ խորության վրա: Աշխատանքների արդյունքում՝ կարող է դրսևորվի աննշան ազդեցություն գրունտային ջրերի պոտորության, կախյալ մասնիկների պարունակության վրա: Քիմիական նյութերի օգտագործում, տեխնիկական միջոցները դաշտում վառելիքով լիցքավորում չի նախատեսվում, ուստի որևէ ազդեցություն հողի և հողի միջոցով նաև գրունտային ջրերի վրա չի սպասվում:

Կոմունալ-կենցաղային ջրօգտագործման արդյունքում առաջանում են կեղտաջրեր, որոնց հեռացման համար տեղամաս կբերվի կեղտաջրերի հավաքման բաք՝ անթափանց հատակով և պատերով, որը տարածքից կհեռացվի մի քանի օր տևողությամբ դաշտային աշխատանքների ավարտից անմիջապես հետո:

Հողային ծածկույթ.

Մակերևութային հետախուզական փորվածքների անցման արդյունքում խախտվելու է տարածքի մակերևույթը՝ մոտ 49.6մ² ընդհանուր մակերեսով: Աշխատանքների ավարտից հետո նախատեսվում են փորվածքների հետլցնում, մակերեսների ամրացման և ռեկուլտիվացման աշխատանքներ:

Նոր ճանապարհների շինարարություն չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող ճանապարհները:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հողերի աղտոտում չի լինելու: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հողերի աղտոտման կանխարգելման, ինչպես նաև լեռնային փորվածքներով խաթարված տարածքների վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումները ընկերության կողմից կձեռնարկվեն անհապաղ:

Քանի որ հայցվող տարածքի մակերեսի բուսահողային բերրի շերտը խորհրդային տարիներին հիմնականում հանվել, տեղափոխվել և օգտագործվել է գյուղատնտեսական նպատակներով, ուստի տեղամասում մնացած բուսահողային շերտը առկա է հատվածաբար, շատ փոքր հզորությամբ (մինչև 10սմ) կամ էլ բացակայում է: Ստորև ներկայացվող հաշվարկների համար ընդունում ենք հնարավոր առավելագույն մակերեսը՝ 49.6մ²: Ռեկուլտիվացման աշխատանքները նախատեսվում են ընդհանուր 49.6մ² մակերեսով հորերի անցման հետևանքով խախտված հողերի վերականգնման համար: Ընդհանուր 49.6մ² մակերեսով հորերի անցման ժամանակ այդ տարածքներից տեղահանվելու է դելյուվիալ կավավազային և ԱԿԽ շերտեր: Հետագայում այդ զանգվածը կօգտագործվի փորվածքները ծածկելու համար:

Նախագծով նախատեսվում է խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնման միջոցառումներ՝ փորվածքների լցում, հողագուրկ մակերեսների հարթեցում և ամրացում, ռեկուլտիվացում:

Հորերի անցման ժամանակ այդ տարածքից տեղահանվելու է հողաբուսաշերտ՝ մինչև 10սմ հզորությամբ: Հողաբուսական շերտը, կոնկրետ փորվածքի տեղում առկայության դեպքում, փորվածքի մակերեսից կհեռացվի և փորվածքի մի կողմում կտեղադրվի հանված մակաբացման ապարներից և օգտակար հանածոյից առանձին, այնուհետև կօգտագործվի հորերի մակերեսների ռեկուլտիվացման համար:

Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշման, պահպանման, նպատակային և արդյունավետ օգտագործման հարցերով ընկերությունն առաջնորդվելու է ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն և 2011թ.-ի սեպտեմբերի 8-ի N1396-Ն որոշումներով սահմանված պահանջներով: Բոլոր փորվածքների անցման, նմուշարկման և հետլցման ժամկետը նախատեսվում է 1 օր, ուստի հողի բերրի շերտը, որը հանվել և կուտակվել է փորվածքի անմիջական հարևանությամբ՝ առանձին, այդ կարճ ժամանակահատվածում պահպանման լրացուցիչ միջոցառումների կարիք չի ունենա:

Հողաբուսական շերտի վերականգնման ենթակա ընդհանուր մակերեսը կկազմի առավելագույնը 49.6մ^2 , իսկ հողաբուսաշերտի ծավալը կկազմի՝ $49.6\text{մ}^2 \times 10\text{սմ} = 4.96\text{մ}^3$:

Նախագծով նախատեսվում է խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնման միջոցառումներ՝ փորվածքների լցնում, նույն տեղից հանված հողաբուսային շերտով ծածկում, հողագուրկ մակերեսների հարթեցում և ամրացում, իսկ կենսաբանական վերականգնման միջոցառումներ 49.6մ^2 ընդհանուր մակերեսով թվով 31 փորվածքների տարանջատ, փոքր հողակտորներում նպատակահարմար չէ: Ռեկուլտիվացման աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկումն իրականացվել է ՀՀ Կառավարության 18.08.2021թ. թիվ 1352-Ն որոշումով սահմանված կարգով:

ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ

Տեխնիկական վերականգնման աշխատանքների արժեքի կառուցվածքը ներկայացվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \Sigma\sigma + \tau + \lambda + \sigma_{\text{ն}} + \sigma_{\text{ս}}, \text{ որտեղ՝}$$

U – աշխատանքների արժեքն է

$\Sigma\sigma$ – ռեկուլտիվացիոն աշխատանքների բոլոր միջոցառումների ծախսերի հանրագումարն է

τ – ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար նախատեսված շահույթն է

λ – ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար նախատեսված հարկերն են

$\sigma_{\text{ն}}$ – ռեկուլտիվացիոն աշխատանքների նախագծման ծախսերն են

$\sigma_{\text{ս}}$ – ռեկուլտիվացիոն աշխատանքների մեղմացման միջոցառումների ծախսերն են:

Աշխատանքների արժեքի մեջ մտնող բոլոր միջոցառումների ծախսերը, ելնելով շինարարական և այլ նորմաներից, խմբավորվում են հետևյալ կառուցվածքով՝

$$\Sigma\sigma = \Omega\sigma + \Lambda\sigma + U_{\text{ծ}}, \text{ որտեղ՝}$$

ՈԻԾ - ուղղակի ծախսերն են

ԱԾ - անուղղակի ծախսերն են

Աձ - այլ ծախսերն են:

$$\text{ՈԱԾ} = \text{Ա}_2 + \text{Ն} + \text{Մ, որտեղ՝}$$

Ա_2 - հողերի ռեկուլտիվացման աշխատանքների հիմնական բանվորների աշխատավարձն է

Ն - նյութերի, կառուցվածքների և պատրաստվածքների արժեքն է

Մ - մեքենաների, մեխանիզմների շահագործման ծախսերն են

1. Աշխատավարձ

$$\text{Ա}_2 = \text{S} \times \text{Դ} \times \text{Գ}$$

S - աշխատատարությունը, մարդ/ժամ – 49.6մ² (ամբողջ ծավալը) : 8մ² (միավոր աշխատաժամի նորմը) = 7 մարդ/ժամ կամ 1 մարդ/օր: Նախատեսվում է աշխատանքներում ներգրավել 1 մարդ:

Դ – մեկ ժամվա դրույքը – (90հազ. դրամ : 173.1 = 520 դրամ)

Գ – պայմանները հաշվի առնող գործակից – 1.3

$$\text{Ա}_2 = 7 \text{ մարդ/ժամ} \times 520 \text{ դրամ} \times 1.3 = 4732 \text{ դրամ}$$

2. Նյութերի արժեքը

Մետաղյա բահ – 1 հատ x 1000դրամ = 1000դրամ

3. Մեքենաների և մեխանիզմների շահագործման արժեք

Մ-աշխատանքների տեխնիկական փուլի մեքենաների և մեխանիզմների շահագործման արժեքն է:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է մեկ մարդատար մեքենա 7 ժամ տևողությամբ:

$\text{Մ} = \text{Ժ} \times \text{Ա}$, որտեղ Մ - մեքենայի շահագործման արժեքն է, Ժ – մեքենային աշխատանքի ժամանակը (7 ժամ), Ա – մեկ մեքենա/ժամի արժեքը (1200դրամ)

$$\text{Մ} = 7 \text{ ժամ} \times 1200 \text{ դրամ} = 8400 \text{ դրամ}$$

4. Անուղղակի ծախսեր

$$\text{ԱԾ} = \text{ՈԻԾ} \times 5.3\% = (4732 \text{ դրամ} + 8400 \text{ դրամ}) \times 5.3\% = 696 \text{ դրամ}$$

5. Շահույթ

$$\text{Շ} = (\text{ՈԻԾ} + \text{ԱԾ}) \times 10\% = 13828 \text{ դրամ} \times 10\% = 1383 \text{ դրամ}$$

6. Այլ ծախսեր

$$\text{Ա} = \text{Ժ} + \text{Զ} + \text{Լ}$$

Տվյալ աշխատանքների կատարումը այլ ծախսեր չի նախատեսում:

Ընդերքօգտագործողը՝ «ՆԱՆԱՏ» ՍՊԸ
 Ռեկուլտիվացիոն աշխատանքների անվանումը և իրականացման վայրը՝ Մեծամոր համայնք
 Օբյեկտի անվանումը՝ ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ»
 տեղամաս

ՀԱՇՎԱՐԿ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ

_____ 20 թ.

Հ/հ	Հիմնա- վորում	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափման միավորը	Ծավալը, մ ²	Արժեքը, դրամ	
					Միավորի	Ընդհանուր
1	2	3	4	5	6	7
1.	1	Աշխատավարձ	դրամ	49.6	95	4732
2.	2	Նյութեր	դրամ			1000
3.	3	Տրանսպորտային ծախսեր	դրամ			8400
4.	4	Անուղղակի ծախսեր, 5,3%	դրամ			696
5.	5	Շահույթ, 10%	դրամ			1383
6	6	ԱԱՀ, 20%				3242
Ընդամենը						19453

Ընդերքօգտագործողի (նախագծող/նախագծային ինստիտուտ) պատասխանատու
 ներկայացուցիչը

_____ Հայկ Սարգսյան _____
 (ազգանունը, անունը, հայրանունը)

Տնօրեն _____
 (պաշտոնը, ստորագրությունը)

Խախտված հողերի ռեկուլտիվացման աշխատանքների վերոնշյալ
 նախահաշվային արժեքը ներառված է փորվածքների լցման/լեռնատեխնիկական
 վերականգնման միջոցառումների աշխատանքների նախահաշվային արժեքում:

Բուսական և կենդանական աշխարհ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը տարածքի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է: Ինչպես արդեն ներկայացվել է («Բուսական և կենդանական աշխարհը» բաժին)՝ տեղամասի տարածքում չկան անտառապատ տարածքներ: Տեղամասի հարակից տարածքում բուսականությունը ներկայացված է անապատային աղասեր բուսականության բնորոշ, հանրապետության տարածքի ֆոնային տեսակներով, որոնք լայն տարածված են Արարատի և Արմավիրի մարզերի անապատային-կիսանապատային լանդշաֆտներում: Կենդանիների բներ, որջեր չեն դիտարկվել:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում, քանի որ «Որդան կարմիր» պետական արգելավայրը գտնվում է հայցվող տարածքից նվազագույնը 2.3կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն:

Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ Եղեգնուտի ԱԿԽ «ՆԱՆԱՏ» տեղամասի տարածքում հետախուզահորերի անցման ընթացքում հանվելու է մակաբացման փուխր ապարների որոշակի զանգված:

ԱԿԽ զանգվածը ծածկող հողաբուսական և մակաբացման շերտերի ընդհանուր միջին հզորությունը սպասվում է 2մ սահմաններում տեղամասի եզրային մասերում և 0-0.5մ՝ տեղամասի ոչ եզրային մասերում: Հետախուզական փորվածքներում ծածկող ապարների սպասվող միջին հզորությունը կարող է լինել 1.0 մ սահմաններում Մակաբացման փուխր ապարների հանույթը կկազմի առավելագույնը մոտ 49.6մ³ (49.6մ² X 1.0մ):

Համաձայն ՀՀ Բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն Որոշման՝ մակաբացման ապարները հանդիսանում են փխրուն մակաբացման ապարներ և դասակարգվում են 34000120 01 99 5 ծածկագրով:

Այս մակաբացման զանգվածը իներտ է, ոչ վտանգավոր, չի կարող ենթարկվել էական ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական վերափոխումների:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների արդյունքում տեղամասի տարածքում ընդերքօգտագործման արտադրական թափոնների օբյեկտ չի առաջանալու, քանի որ.

- հետախուզական փորվածքներից հանված ԱԿԽ զանգվածը, նմուշարկումից հետո, հետ է լցվելու հորերի տարածք, կատարվելու է հարթեցում,
- տեխնիկաների սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կետերի տարածքում, որտեղ ապահովված են անհրաժեշտ պայմանները քայուղերի, յուղերի, տարատեսակ նավթամթերքների անվտանգ պահման և գործածման համար :

Աշխատանքների ընթացքում առաջանալու է չտեսակավորված կենցաղային աղբ (օրական 10կգ-ից ոչ ավել), որը ներկայացված է ապակու, թղթի, կտորի, սննդի մնացորդներից և պոլիմերներից: Թափոնը հաշվառված է 91200400 01 00 4 ծածկագրով՝ որպես «Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)»: Մինչև 4-5 օր տևողությամբ դաշտային աշխատանքների ընթացքում առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա համայնքի կողմից հատկացված աղբավայր:

Սոցիալական ազդեցությունը և ռիսկերը

Նախատեսվող գործունեությունն այս փուլում էական ազդեցություն չի ունենա համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Հետագայում՝ հնարավոր հանքարդյունահանման աշխատանքների իրականացման դեպքում, Ընկերությունը համայնքում լրացուցիչ սոցիալ-տնտեսական օժանդակության ծրագրերի կմասնակցի:

Աղմուկ և թրթռումներ

Ծրագրավորվող աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը կարող է լինել առաջացող աղմուկը: Նախնական հաշվարկներով

աշխատանքների ժամանակ առավելագույնը առաջանալու է 60դԲԱ ադմուկ՝ կապված 1 էքսկավատորի աշխատանքի հետ:

Բնակելի տարածքում ադմուկի մակարդակի նորման կազմում է 45 դԲԱ:

Ադմուկի մակարդակը ադմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ}$

Որտեղ՝

$\Delta LA_{էկվ}$ - ադմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, $LA_{էկվ} = 60$ դԲԱ

$\Delta LA_{հեռ}$ - ադմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և ադմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված

$\Delta LA_{հեռ} 0.25$ կմ-ի վրա կազմում է 10դԲԱ

$\Delta LA_{էկր}$ - ադմուկի մակարդակի նվազումը էկրանով:

$\Delta LA_{էկր} = 12$ դԲԱ տեղամասի տարածքը տվյալ դեպքում ծառայում է որպես էկրան:

$LA_{կանաչ}$ - ադմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta LA_{կանաչ} = 0$ դԲԱ

Ադմուկի մակարդակը ադմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում

կկազմի՝ $LA_{տար} = LA_{էկվ} - LA_{տար} = LA_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta LA_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 60 - 10 -$

$12 = 38$ դԲԱ (նորման՝ 45դԲԱ):

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող տեխնիկայի, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Հաշվի առնելով աշխատող մեխանիզմի տեսակը, աշխատանքների բնույթը, հեռավորությունը մոտակա բնակավայրերից, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը և թրթռումների մակարդակը շրջակա բնակավայրերի տարածքում չի առաջացնի գերնորմատիվային ազդեցություն:

Ռելիեֆի լանջերի դեֆորմացիաներ

Տեղամասի տարածքն ունի մինչև 3° թեքության հարթ ռելիեֆ: Տեղամասի, ինչպես նաև հարակից տարածքներում սողանքային մարմիններ չեն արձանագրվել: Տեղամասի և հարակից տարածքներում սողանքային մարմիններ չեն արձանագրվել: Համաձայն 2010թ. կազմված «ՀՀ տարածքում վտանգավոր սողանքների ամփոփագրի»՝ տեղամասի տարածքում և շրջանում սողանքային մարմիններ չկան և աշխատանքների ազդեցություն սողանքների վրա չի կարող լինել:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության գնահատման մատրիցը.

Շրջակա միջավայրի բաղադրիչները	Գործողություններ	
	Բեռների, սարքավորումների և անձնակազմի տեղափոխում	Մակերեսային լեռնային փորվածքների անցում
Մթնոլորտային օդ	ցածր կարճատև	ցածր կարճատև
Ջրեր	-	ցածր կարճատև
Հողեր	ցածր կարճատև	ցածր կարճատև
Կենսաբազմազանություն	ցածր կարճատև	ցածր կարճատև
Պատմամշակութային հուշարձաններ	-	-

6.ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

6.1.Նախատեսվող հիմնական միջոցառումները

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերում՝ համապատասխան ծառայություն մատուցող կայաններում:
- Աշխատանքներում ներգրավել միայն արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրերով համալրված սարքավորումներ և մեքենաներ:
- Դաշտային աշխատանքները տևելու են 4-5 օր, տեղամասի մակերեսային գրունտը կապիլյար ներծծման շնորհիվ գտնվում է խոնավ վիճակում, ուստի փոշենստեցման անհրաժեշտություն և տեխնիկական ջրօգտագործում չի նախատեսվում: Տեղամասի և 30-50մ հեռավորությամբ գտնվող այգեգործական հողատարածքների միջև առկա գրունտային ճանապարհը չպետք է օգտագործվի որպես տեխնիկաների տեղաշարժի և դրանց աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի մատակարարման հիմնական երթուղի՝ կանխելու համար փոշեառաջացումը: Կարճաժամկետ աշխատանքներում ներգրավված աշխատակիցների խմելու ջուրը կգնվի մոտակա որևէ գյուղի որևէ խանութից:
- Աշխատակիցների կենցաղային պայմանների ապահովման նպատակով տարածքում անվավոր վագոն-տնակի տեղադրում, որը կօգտագործվի որպես հանդերձարան և հանգստի սենյակ: Ջրցողարանի տեղադրում չի նախատեսվում՝ հաշվի առնելով ծրագրավորվող աշխատանքների փոքր ծավալները և կարճ տևողությունը:
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողություններում, 50լ տարողությամբ պոլիէթիլենային պարկերում, աղբահանության պայմանագրի կնքում տարածաշրջանում գործող օպերատորի հետ, աղբահանության վճարի հաշվարկում և վճարում:

- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- Հետախուզահորերից հանված նյութի հետլցնում, տարածքի հարթեցում, ինչը հանդիսանում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բաղկացուցիչ մաս:
- Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն : Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95 դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80 դԲԱ: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող էքսկավատորի, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

– Տեղամասի տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում ձեռնարկել միջոցառումներ դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, համաձայնեցնելով դրանք պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

- Տեղամասի տարածքում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

-Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

- ✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
- ✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,
- ✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;
- ✓ պետական մարմինների ծանուցում,
- ✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար:

6.2. Սոցիալական ազդեցություն

Աշխատանքները նախատեսվում է կատարել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը:

Աշխատակազմը պետք է ունենա խմելու որակյալ ջրի և զուգարանի հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում, հասանելի վայրում, պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը պետք է ապահովված լինի համազգեստով և անվտանգության միջոցներով:

Տեղամասի տարածքում աշխատողների առողջության վրա ազդեցությունները պայմանավորված են լինելու էքսկավատորի աշխատանքի ժամանակ առաջացող ձայնային ազդեցություններով: Ձայնային ազդեցությունը անձնակազմի առողջության վրա նվազեցնելու համար աշխատակիցները կրելու են ձայնամեկուսիչ ականջակալեր: Տեղամասի տարածքում աշխատանքների ընթացքում կատարվելու է նաև աղմուկի մակարդակի մշտադիտարկում: Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցության այլ կոնկրետ գործոններ չեն առանձնացվել:

Անվտանգության նոր սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը կնախատեսի պարբերական հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Ֆիզիկական ազդեցությունները /օրինակ՝ աղմուկը/ կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է համալրված լինեն համապատասխան սարքին խլացուցիչներով: Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթությունը տրվում է տեղի բնակչությանը:

Նախատեսվող գործունեությունն այս փուլում էական ազդեցություն չի ունենա համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Հետագայում՝ հնարավոր հանքարդյունահանման աշխատանքների իրականացման դեպքում, Շնկերությունը համայնքում լրացուցիչ սոցիալ-տնտեսական օժանդակության ծրագրերի կմասնակցի:

6.3. Արտակարգ իրավիճակների, անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումների ծրագրեր

Տեղամասի տարածքում հնարավոր արտակարգ իրավիճակների նկարագիրը ներկայացվում է ստորև:

1. Արտածին երկրաբանական երևույթներով պայմանավորված արտակարգ իրավիճակներ

Եղեգնուտի ԱԿԽ հանքավայրի «ՆԱՆԱՏ» տեղամասի տարածքը հարում է Միջին Արաքսյան գոգավորության ցածրադիր մասին՝ միջլեռնային տեկտոնական

իջվածք հանդիսացող Արարատյան դաշտին : Դաշտը ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ավելի քան 200կմ, 25-45կմ լայնությամբ : Տարածքի մակերևույթը հարթ է, թույլ գառիկող, թեքության անկյունը չի գերազանցում 3°:

Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) և 2010թ. կազմված «ՀՀ տարածքում վտանգավոր սողանքների ամփոփագրի»՝ տեղամասում և դրա հարակից շրջանում սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Հետևաբար, սողանքային երևույթների հետ կապված արտակարգ դրություններ չեն լինելու:

II. Երկրաշարժով պայմանավորված արտակարգ իրավիճակներ

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի՝ 1-ին տեղամասի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Երկրաշարժի հետ կապված արտակարգ իրավիճակներում արագ արձագանքելու նապատակով նախատեսվում է տեղամասում աշխատող անձնակազմի համար կազմակերպել իրազեկման դասընթացներ և ներկայացնել գործողությունների համառոտ ծրագիրը: Երկրաշարժի դեպքում՝ ցնցումները զգալու ժամանակ հանքում աշխատող անձնակազմը պարտավոր է.

- անջատել բոլոր գործող սարքավորումները, մեխանիզմներն ու մեքենաները,
- հեռանալ մեքենաների և մեխանիզմների տեղակայման վայրից,
- կանգնել բացօթյա տարածքում,
- կապ հաստատել կազմակերպության ղեկավարության հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- կապ հաստատել տարածքային կառավարման մարմինների հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- աշխատանքները սպասարկող մեքենաներով ապահովել աշխատակիցների տարահանումը:

III. Գարնանային վարարման հետ կապված արտակարգ իրավիճակներ

Տեղամասի տարածքում գետեր, մակերևութային ջրային հոսքեր չկան, ուստի գանանային վարարումների հետ կապված արտակարգ իրավիճակներ չեն կարող լինել: Հորդառատ տեղումների շրջանում, ըստ անհրաժեշտության, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ չեն կատարվելու, տեխնիկական միջոցները հեռացվելու են տեղամասից, ինչը թույլ կտա բացառել սելավների հետ կապված բոլոր խնդիրները:

IV. *Հրդեհային անվտանգությունն* ապահովվելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

V. *Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների* (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ): Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ի հայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով :

Տեղամասի տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործվում են մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,

- անցկացվելու են պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,

- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
2. Հայցվող տարածքում առկա փորվածքների ջրերի որակի մշտադիտարկում, ամսեկան մեկ անգամ հաճախականությամբ,
3. Տեղամասի մակերեսի հողերի դիտարկում՝ նավթամթերքներով աղտոտվածությունը բացառելու նպատակով, տարեկան մեկ անգամ,
4. Տեղամասում և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում, տարեկան մեկ անգամ,
5. Աղմուկի մակարդակի վերահսկողություն, տարեկան մեկ անգամ :

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Կենսաբազմազանության դիտարկումը կատարվելու է համապատասխան մասնագետների կողմից (բուսաբան, կենսաբան)՝ պայմանագրային հիմունքներով:

Ազդակիր համայնքների վրա ազդեցության մշտադիտարկում

Ընդհանրապես շրջակա միջավայրի վիճակի վատթարացումը ազդում է տարածքի բնակչության կենսամակարդակի վրա:

Ընդհանրապես, լայնընդգրկուն հանքարդյունաբերական նախագծերի իրականացման դեպքում, բնակչության առողջության հետ կապված առաջացող հիմնահարցեր կարող են դառնալ.

- Աղտոտման հետ կապված հիվանդությունները և մահացությունները:
- Ջրի որակի և կենցաղային, տնտեսական, գյուղատնտեսական և այլ կարիքների համար դրա մատչելիության գնահատականը :
- Բնակելի շրջաններում մթնոլորտային օդի որակի գնահատման արդյունքները:
- Մթնոլորտային օդի աղտոտման մշտական կամ հատվածային բարձր մակարդակի տվյալները:

Սովորաբար տեղի բնակչությունը շրջանցվում է նաև սոցիալական և մշակութային հարաբերություններում՝ չունենալով մեծ հնարավորություններ մասնակցելու պետության և ընկերության ներկայացուցիչների միջև ընթացող բանակցություններին: Այդ ամենը կարող է առաջացնել անվստահություն և լարվածություն: Ուստի նման անցանկալի երևույթներից զերծ մնալու համար անհրաժեշտ է ապահովել.

- Ամբողջ գործընթացի թափանցիկություն. տեղի բնակչությունը պետք է մասնակցի տեղական զարգացման ծրագրերում ֆինանսական միջոցների բաշխման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներին, ինչպես նաև աուդիտի կամ այդ ներդրումների արդյունավետության գնահատմանը :
- Տեղեկատվության փոխանակում. տեղի բնակչության, լեռնարդյունահանող ընկերության և իշխանության ներկայացուցիչները պետք է ստեղծեն տեղեկատվության փոխանակման ընթացակարգեր/ռազմավարություններ՝ որոշումների ընդունման ամենավաղ փուլերից սկսած և նախագծի իրագործման բոլոր փուլերում :

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման համաձայն ներկայացվում է մշտադիտարկումների աղյուսակը:


ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մակերևութային ջրեր	Տեղամասում առկա փորվածքների ջրեր	ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ սահմանված նորմեր	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	ամսական մեկ անգամ
Մթնոլորտային օդ	Հայցվող տեղամասի տարածք	- հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ ստորոգյալ
Հողային ծածկույթ	Ուսումնասիրության հայցվող տարածք,	- հողերի քիմիական կազմը (рН, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), - հողերի կազմաբանությունը՝ կավի պարունակությունը, բաշխումն ըստ մասնիկների չափերի, ջրակլանումը, ծակոտկենությունը, - հումուսի պարունակությունը, - հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	- տարեկան մեկ անգամ - ամսական մեկ անգամ
Աղմուկի մակարդակի վերահսկողություն	Ուսումնասիրության հայցվող տարածք		չափումներ չափման սարքերով	տարեկան մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	ընդերքօգտագործման և հարակից տարածք	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	տարեկան մեկ անգամ

Մշտադիտարկումների իրականացման նպատակով ընկերությունը նախատեսում է տարեկան հատկացնել 300 000 դրամ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մշտադիտարկման կետերի նախնական տեղադիրքը ներկայացված է ստորև նկարում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ԶԱՐՏԵԶ



Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածք

Նկար 13.

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ընկերության պարտավորվել է երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման ընթացքում խստորեն պահպանելու ՀՀ առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի՝ «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N2.2.8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 15-Ա հրամանով հաստատված Սանիտարական կանոններն ու նորմերը:

Ստորև՝ աղյուսակում, ներկայացվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության և դրա մեղմման միջոցառումների համառոտ նկարագրությունը, որի իրականացման պատասխանատուն է հանդիսանում «ՆԱՆԱՏ» ՍՊԸ տնօրենը:

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	- Աշխատողներն ապահովվում են Անհատական Պաշտպանության Միջոցներով (ԱՊՄ) - Սարքավորումների շահագործվում են ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում - Աշխատակիցները իրազեկվում են պաշտպանության հրահանգների վերաբերյալ	- Զննման ընթացքում սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումներ չեն արձանագրվել
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ	Օդի աղտոտում արտանետումներով	- Աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման արգելում - Տեխնիկան և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետումները	- Զննման ընթացքում աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրում չի հայտնաբերվել - Զննման ընթացքում տեխնիկան և մեքենաները շահագործվել են առանց հավելյալ արտանետումների - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել
	Հարակից այգեգործական հողատարածքներում անօրգանական փոշու տարածում	- Տեղամասի և այգեգործական հողատարածքների միջև առկա գրունտային ճանապարհը չպետք է օգտագործվի որպես տեխնիկաների տեղաշարժի և դրանց աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի մատակարարման հիմնական երթուղի	- Մոտակա տնտեսություններից բողոքներ չեն եղել

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
	Աղմուկ	- Սահմանված աշխատանքային ժամերի պահպանում - Աղմկախլացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների վրա - Սարքավորումների կանխարգելիչ վերանորոգում աղմուկը նվազեցնելու նպատակով - Ոչ անհրաժեշտ և չօգտագործվող սարքավորումների անջատում	- Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում չի հայտնաբերվել - Ջննման ընթացքում սարքավորումները եղել են բավարար տեխնիկական վիճակում - Ջննման ընթացքում միացված չօգտագործվող սարքավորումներ չեն հայտնաբերվել - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել
	Հողերի աղտոտում արտանետումներով	- Տեխնիկաների վառելիքով լիցքավորում հատուկ լցակայաններում - Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխում մոտակա կազմակերպված աղբավայր -	- Տեխնիկական միջոցները շահագործվում են սարքին վիճակում՝ բացառելով վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը - Տեղամասի տարածքը զերծ է աղբից
	Ջրերի աղտոտում արտանետումներով	- Կոմունալ-կենցաղային կեղտաջրերի հեռացման համար անթափանց հատակով և պատերով կեղտաջրերի հավաքման բաքի տեղադրում	- Աշխատանքների հսկողություն - Արտահոսքերի բացառում
	Կենդանական աշխարհ	- Աղմուկի սահմանված մակարդակի վերահսկում - աշխատանքներին ներգրավված անձնակազմի ուսուցում՝ իրազեկում շրջանում հայտնի ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ; -	- Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում չի հայտնաբերվել - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել
	Բուսական աշխարհ	- Հողերի ռեկուլտիվացիա, - աշխատանքներին ներգրավված անձնակազմի ուսուցում՝ իրազեկում շրջանում հայտնի ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ;	- Վերականգնված բուսածածկ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. СН 245 – 71. Санитарные нормы проектирования промышленных предприятий
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ: ЕМЕР/ЕЕА
5. СН 245 – 71 Санитарные нормы проектирования промышленных предприятий
6. СНиП 2.04.01-85. Внутренний водопровод и канализация зданий
7. «ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմեր», 2024
8. Քո շրջապատի թփերը, 1984, Լ.Վ. Հարությունյան
9. Дубравы Армении, 1957, Л.Б. Махатадзе,
10. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2007
11. Հայաստանի բնաշխարհ, 2006
12. Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր, 2002
13. Հայաստանի կենսաբազմազանության առաջին ազգային զեկույց, 1999
14. ՀՀ բույսերի կարմիր գիրք, 2010
15. ՀՀ կենդանիների կարմիր գիրք, 2010
16. ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայք <http://armavir.mtad.am>,
17. Մեծամորի համայնքապետարանի պաշտոնական կայք՝
<https://mecamorcity.am/>
18. ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք՝ <https://armstat.am/am>
19. “Цветущие уголки биоразнообразия”, FAO,
<http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>

**Վարձակալության վկայականները, հողամասերի հատակագծերը, նախատեսվող
գործունեության վերաբերյալ համաձայնագիրը**

	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԱՅԱԿԱՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ	 Կադաստրի կոմիտե
Սույն վկայականով հաստատվում է 29 փետրվարի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.		
1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ) ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԻԲԵԿԻ		
2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ Մարզ Արմավիր, համայնք Մեծամոր գյուղ Եղեգնուտ		
3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ Վարձակալության պայմանագիր կնքված 23/02/2024թ. սմ - 963		
4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ Կադաստրային ծածկագիրը՝ 04-039-0063-0051 Մակերեսի չափը (հա)՝ 11 Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Այլ հողատեսք Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ		
ՎԱՅԱԿԱՆ N 29022024-04-0106, գաղտնաբառ՝ EJK2VGBIQK1C		
Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով		
Էջ 1/2		

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

ժամկետը 20 տարի

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԿԱՐԱՊԵՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ձբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 29022024-04-0030, գաղտնաբառ՝ F6QAD6AZ7UYA

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 29 փետրվարի 2024 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԻԲԵԿԻ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Արմավիր, համայնք Մեծամոր գյուղ Եղեգնուտ

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՈՒԹՅՈՒՆԸ

23.02.2024թ. Վարձակալության պայմանագիր N960

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 04-039-0063-0052

Մակերեսի չափը (հա)՝ 11

Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Այլ հողատեսք

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 29022024-04-0030, գաղտնաբառ՝ F6QAD6AZ7UYA

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Պայմանագրի գործողության ժամկետը մինչև 23/02/2044թ.:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐՄԵՆ
ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 29022024-04-0106, գաղտնաբառ՝ EJK2YGBIQK1C

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 2/2



Արմավիրի մարզ
Համայնք Մեծամոր գյուղ Եղեգնուտ
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 04-039-0063-0051
Մասշտաբ 1: 2000

Կադաստրի
կոմիտե




Կոորդինատներ							
	X	Y		X	Y		X
1	8428995.8820	4439281.9686	16	8428568.1474	4439144.5579	31	8428970.2959
2	8429000.1193	4439341.9449	17	8428723.0277	4438951.3359	32	8428970.3775
3	8429005.5779	4439419.2081	18	8428728.1003	4438945.0075	33	8429013.6399
4	8429005.6447	4439420.1534	19	8428741.6915	4438968.1436	34	8429018.0461
5	8428989.6026	4439425.4758	20	8428777.1852	4439028.5644	35	8429018.0562
6	8428987.9480	4439426.0248	21	8428777.2299	4439028.6404	36	8429061.5988
7	8428916.3727	4439361.4275	22	8428781.2089	4439036.4270	37	8429061.5985
8	8428871.0986	4439337.3595	23	8428788.4620	4439046.5191	38	8429059.2255
9	8428846.6640	4439328.7627	24	8428805.0103	4439060.2623	39	8429058.8541
10	8428845.2205	4439328.2545	25	8428827.2526	4439071.6425	40	8429054.4657
11	8428781.0466	4439303.6614	26	8428871.0942	4439086.6737	41	8429050.0159
12	8428775.3455	4439303.6546	27	8428871.4540	4439086.7480	42	8429049.7766
13	8428746.2256	4439293.4045	28	8428935.1584	4439099.9037	43	8428995.2577
14	8428743.5406	4439274.1205	29	8428935.5660	4439099.9879		
15	8428661.3451	4439217.4332	30	8428935.7329	4439100.0271		

A3

սպասարկման գրասենյակ



Արմավիրի մարզ
Համայնք Մեծամոր, գյուղ Եղեգնուտ
Հատված կադաստրային քարտեզից
Կադաստրային ծածկագիր՝ 04-039-0063-0052
A3-Մասշտաբ 1: 2000



ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Ես՝ Հայկ Սարիբեկի Սարգսյանս (անձնագիր՝ AT 04847918, տրված 22.10.2019թ. 008-ի կողմից, հաշվառված՝ ք.Երևան, Շրջանային տուն 76), հանդիսանալով ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Եղեգնուտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող և համայնքային սեփականություն հանդիսացող 04-039-0063-0051 և 04-039-0063-0052 կադաստրային ծածկագրերով, ընդհանուր՝ 22 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալ (Վարձակալական իրավունքի գրանցման վկայականներ՝ N 29022024-04-0106, N 29022024-04-0030), տալիս եմ իմ համաձայնությունն այն մասին, որ վարձակալության իրավունքով ինձ պատկանող հիշյալ հողամասերում «ՆԱՆԱՏ» ՍՊԸ կողմից իրականացվի ավազակոպճային խառնուրդի երևակման սահմաններում երկրաբանական ուսումնասիրություններ:

 — Հայկ Սարգսյան

19.03.2025թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՊՈԱԿ

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
INSTITUTE OF ARCHAEOLOGY
AND ETHNOGRAPHY SONP



РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ
И ЭТНОГРАФИИ ГНКО

20. 06. 2025 թ.

N 2470-171

«ՆԱՆԱՏ» ՍՊԸ
տնօրեն Հ. Սարգսյանին

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 16/06/2025 թ. N 2 զրույթյան, տեղեկացնում ենք, որ մեր աշխատակից Հ. Բադալյանը վերգետնյա հնագիտական տեղագնություն է իրականացրել Ձեր նախանշած Արմավիրի մարզի, Մեծամոր համայնքի, Եղեգնուտ բնակավայրի՝ թիվ 04-039-0063-0051 և թիվ 04-039-0063-0052 կադաստրային ծածկագրերով մոտ 22 հա մակերեսով հողամասերի տարածքում: Ընկերությունը նախատեսում է այստեղ իրականացնել ավազակոպձային խառնուրդի արդյունահանում: Այն բավականին հարթ տարածք է՝ ամբողջությամբ ճահճացած, հարուստ եղեգներով: Հողատարածքներում, ժամանակին 2-3 մ հաստությամբ վերին շերտը հեռացվել է և այստեղ իրականացվել է ոչ մեծ ծավալի ավազի հանույթ: Նշված տարածքներում տեղագնության արդյունքում վերգետնյա պատմամշակութային կասկածելի շերտեր չեն փաստագրվել և չեն հայտնաբերվել նաև վերգետնյա հնագիտական իրեր:



1 2

Նկար 1-2. Հայցվող տարածքի լուսանկարները

Արսեն Բոբոկյան

Ինստիտուտի տնօրեն



Երևան 0025, Չարենցի փող. 15, հեռ. / ֆաքս (37410) 55-68-96
Ереван 0025, ул. Чаренца 15, тел. / факс (37410) 55-68-96
Yerevan 0025, Charents str. 15, tel. / fax (37410) 55-68-96
E-mail: arsen.bobokhyan@sci.am, abobokhyan@anra.am

